ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1.1 Վարքագծի կանոնների ներդրումը և կիրառումը

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

2.2 Աջակցություն հայտարարատուներին

2.3 Հայտարարագրերի ներկայացման գործընթաց

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

3.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում իրականացված վարույթներ

3.4 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.3 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ներկայացման գործընթաց

4.4 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ներկայացման գործընթաց

4.5 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում

5.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը, հաղորդակցություն

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ
9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ
10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելու լիազորությունը, ինչը շարունակել է պայմանավորել Հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղությունները 2025 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում պահպանվել է բարեվարքության համակարգի տարրերին առնչվող դիմումների և

մեդիա հրապարակումների աճի միտումը, ինչի արդյունքում ավելացել է նաև դրանց հիման վրա իրականացված ուսումնասիրությունների թիվը։

Այսպես, 2025 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում բարեվարքության համակարգի տարրերի (անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարքագծի կանոններ, նվերների ընդունման սահմանափակումներ, այլ սահմանափակումներ) առնչությամբ Հանձնաժողովում իրականացվել է ընդհանուր թվով 120 ուսումնասիրություն: Ի համեմատություն սրա՝ ամբողջ 2024 թվականի ընթացքում իրականացվել է 120 ուսումնասիրություն: Միաժամանակ, նախորդ տարվա երկրորդ կիսամյակի ուսումնասիրությունների թիվը եղել է 60, ըստ այդմ՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ուսումնասիրությունների թիվն աճել է 100 %-ով: Հաշվետու ժամանակաշրջանում նկատվել են բարեվարքության տարրերի հետ կապված հետևյալ հիմնական միտումները՝

➢ շահերի բախման առնչությամբ հարկ է նկատել, որ նախորդ կիսամյակում ձևավորված միտումը պահպանվել է, մասնավորապես, շահերի բախման հնարավոր իրավիճակներում (այդ թվում՝ կապված գնումների գործընթացների հետ) պաշտոնատար անձինք նախքան որոշման կայացումը կամ գործողության կատարումը նախապես դիմել են Հանձնաժողով՝ հայցելով շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված Հանձնաժողովի առաջարկը, ինչը թույլ է տվել պաշտոնատար անձանց կողմից որոշումների կայացման ընդհանուր գործընթացը դարձնել առավել թափանցիկ՝ Հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա ապահովելով գործընթացի հրապարակայնությունը և հնարավոր շահերի բախման բացահայտելիությունը,

➢ վարքագծի կանոնների առթիվ հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում պահպանվել է նախորդ կիսամյակում արձանագրված՝ Հանձնաժողով ներկայացված դիմումների և կատարված ուսումնասիրությունների թվի աճի միտումը, ինչը հնարավորություն է ընձեռել Հանձնաժողովին զարգացնելու վարքագծի կանոնների կիրառման պրակտիկան և դրանց մեկնաբանությունները։ Միաժամանակ, հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի կողմից արձանագրված առերևույթ խախտումները հիմնականում վերաբերել են վարքագծի միևնույն կանոններին, ինչպես և հաշվետվու տարվա առաջին կիսամյակի ընթացքում, մասնավորապես՝ հանրային

հաղորդակցությանը և հրապարակային խոսքին, այդ թվում՝ սոցիալական ցանցերով հաղորդակցության շրջանակներում բարեկրթության և հարգալիրության դրսևորմանը,

➢ նվերների ընդունման սահմանափակումների պահպանման առնչությամբ հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է նվերների հաշվառման գործընթացի հետ կապված դիմումների և գրությունների թիվը: Դրանք մեծամասամբ վերաբերել են նվերների գնորոշմանը, ինչպես նաև առկա իրավակարգավորումների պարզաբանմանը: Հարկ է նկատել, որ չնայած նվերների հաշվառման ռեեստրի կառուցման առկա մարտահրավերներին՝ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով իրականացվել է պաշտոնատար անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը: Հաշվառված նվերների թիվը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշն առավել քան 6 անգամ:

1.1 Վարքագծի կանոնների ներդրումը և կիրառումը

Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների տեղայնացում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին է վերապահվել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների միասնականության ապահովման լիազորությունը: Սույն լիազորությունն անմիջականորեն բխում է հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների սահմանման և դրանց հետագա տեղայնացման օրենսդրական պահանջից:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային

կանոններ) հիմք են հանրային ծառայության առանձին տեսակների համար վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման համար։ Հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր։

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը Տիպային կանոններին համապատասխանության վերաբերյալ դիրքորոշում է տրամադրել Արդարադատության նախարարության կողմից մշակված՝ քրեակատարողական ծառայողների և պրոբացիայի ծառայության ծառայողների վարքագծի կանոնագրքերի նախագծերի, Պաշտպանության նախարարության կողմից մշակված՝ ՀՀ ՊՆ համակարգի զինծառայողների վարքագծի կանոնների նախագծի և Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության կողմից մշակված՝ էկոպարեկային ծառայողների վարքագծի կանոնագրքի նախագծի առնչությամբ։

Որպես հաշվետու ժամանակահատվածում դրական զարգացում՝ հարկ է նկատել, որ 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովը գրություններ էր հասցեագրել իրավասու պետական մարմիններին՝ խնդրելով մշակել կամ լրամշակել այն ծառայության տեսակների վարքագծի կանոնագրքերը, որոնք դեռևս չեն ընդունվել կամ Տիպային կանոնների հետ էական հակասություններ ու անհամապատասխանություններ են պարունակում։ Ըստ այդմ, հաշվետու ժամանակահատվածում, Հանձնաժողովի գրությանն արձագանքելով՝ մշակվել են էկոպարեկային և քրեակատարողական ծառայողների վարքագծի կանոնագրքերը և լրամշակվել է պրոբացիայի ծառայողների վարքագծի կանոնագիրքը։ Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ դեռևս չեն ընդունվել դատական կարգադրիչների վարքագծի կանոնները, իսկ դիվանագետի վարքագծի (էթիկայի) կանոնները (ընդունված 2019 թվականին) շարունակում են էականորեն չհամապատասխանել Տիպային կանոններին ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով։

Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն։

Սույն լիազորության շրջանակներում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից։ Կանոնագիրքը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական arlis համակարգում։

Կանոնագրքով սահմանված նորմերի չպահպանումը օրենքով սահմանված դեպքերում առաջացնում է կարգապահական պատասխանատվություն։

Հաշվետու ժամանակահատվածում 2025 թվականի առաջին կիսամյակում արձանագրված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոններին վերաբերելի մեդիա հրապարակումների և Հանձնաժողով հասցեագրվող դիմումների թվի աճման դինամիկան պահպանվել է։ Այսպես, Հանձնաժողովն իրականացրել է վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ 22 ուսումնասիրություն, որոնցից 12-ը՝ դիմումների հիման վրա, 9-ը՝ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, 1-ը՝ դիմումի և ԶԼՄ հրապարակման (նշած դրվագը ներկայացվում է առանձին՝ նկատի ունենալով, որ դրա վերաբերյալ ուսումնասիրությունը կատարվել է միաժամանակ երկու հիմքով)։ Ի համեմատություն սրա՝ 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովը ստացել էր 13 դիմում և իրականացրել 9 հրապարակման ուսումնասիրություն, իսկ ամբողջ 2024 թվականի ընթացքում Հանձնաժողովը ստացել էր 8 դիմում և իրականացրել 10 հրապարակման ուսումնասիրություն։

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովին ներկայացված դիմումների և մեդիա հրապարակումների

ուսումնասիրության արդյունքում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ 2 վարույթ, ևս 3 դեպքում Հանձնաժողովը որոշել է նախաձեռնել վարույթ, իսկ 9 դիմումի հիման վրա ընդունվել է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ կամ Կանոնագրքի սուբյեկտների շարքից պաշտոնատար անձանց դուրս լինելու հանգամանքով։ Դիմումներից մեկը վերահասցեագրվել է, մեկը՝ վերադարձվել, ևս մեկ դիմումի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքում դիմողին գրությամբ պարզաբանվել է վարույթի հարուցման հիմքերի բացակայության մասին։ Մեդիա հրապարակումների հիման վրա իրականացված 6 ուսումնասիրության արդյունքում վարույթներ չեն հարուցվել, որոնցից 4-ը՝ պայմանավորված վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայությամբ, 1-ը՝ պայմանավորված օբյեկտիվ ապացույցների բացակայությամբ, իսկ 1-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առերևույթ խախտումը կատարած պաշտոնատար անձի լիազորությունները ներկայումս կասեցված են։

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված վարույթներից 1-ն առնչվել է քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի, 1-ը՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտմանը, Հանձնաժողովը նաև ուսումնասիրության արդյունքներով որոշել է նախաձեռնել վարույթ 1 քաղաքական և 1 վարչական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ. նշված դեպքերում հարուցման որոշում հաշվետու ժամանակահատվածում չի ընդունվել։

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման առկայության 3 եզրակացություն՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ։ Նույն ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման բացակայության մասին 1 եզրակացություն՝ վարչական պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ։ Մեկ վարույթով՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի վերաբերյալ, օրենքով սահմանված՝ 90-օրյա ժամկետի լրացման օրվա դրությամբ արձանագրվել է եզրակացության ընդունման անհնարինությունը՝ պայմանավորված Հանձնաժողովի իրավազոր կազմի (առնվազն 3 անդամ) բացակայությամբ, քանի որ Հանձնաժողովի անդամներից մեկը դեռևս նշված վարույթի հարուցման

փուլում ինքնաբացարկ է հայտնել։ Հաշվետու ժամանակահատվածում ընդունված՝ Հանձնաժողովի եզրակացությունները հասանելի են հետևյալ հղումներով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/09/%D5%8F%D5%A1%D6%80%D5%B8%D5%B6-%D5%89%D5%A1%D5%AD%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/09/%D5%8F%D5%A1%D5%BE%D6%80%D5%B8%D5%BD-%D5%8D%D5%A1%D6%83%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6-1.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/08/00-10.pdf, https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/08/00-9.pdf։

Վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով ևս 1 վարույթ ընթացքի մեջ է. դրա շրջանակներում ներկայացվել է առերևույթ հանցագործության վերաբերյալ հաղորդում և վարույթը կասեցվել է։

Հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում շարունակական են եղել վարքագծի կանոնների համակարգի միասնականության ապահովման տեսանկյունից նախկինում արձանագրված մարտահրավերները, մասնավորապես՝ համայնքի ավագանու անդամների, համայնքային վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը։

Պաշտոնատար անձանց նշված խմբերի համար վարքականոնների սահմանմամբ հնարավոր կլինի ամբողջացնել վարքագծի կանոնների միասնական համակարգը և ապահովել բոլոր սուբյեկտների կողմից վարքագծի կանոնների խախտումների համակողմանի և արդյունավետ քննությունը։

1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

Հանձնաժողովը 2025 թվականի երկրորդ կիսամյակում շարունակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումների և մեդիա հրապարակումների

ուսումնասիրությունը և պարզաբանումների տրամադրումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ընդհանուր թվով 119 դիմում և մեդիա հրապարակում: Եվս 1 դեպքում ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների արդյունքում վերհանված վերաբերելի տվյալները: Ուսումնասիրված մեդիա հրապարակումների ընդհանուր թիվը կազմել է 21: Եվս 1 ուսումնասիրություն իրականացվել է միաժամանակ մեդիա հրապարակման և դիմումի հիման վրա և գծապատկերում արտացոլված է դիմումների թվում: 98 ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել այլ պետական մարմիններից և քաղաքացիներից ստացված դիմումները:

2025 թվականի երկրորդ կիսամյակում բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ կատարված ուսումնասիրություններ



Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներից և պետական մարմիններից ստացված դիմումների և գրությունների հիման վրա իրականացված թվով 98 ուսումնասիրությունից 11-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 40-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 13-ը՝ վարքագծի կանոնների, 26-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, 4 դեպքում ուսումնասիրության առարկան վերաբերել է այլ սահմանափակումներին, ևս 4 դիմում՝ Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ: 21 մեդիա հրապարակումներից՝ 10-ը վերաբերել են վարքագծի կանոններին, 10-ը՝ շահերի բախման իրավիճակներին և 1 դեպք վերաբերել է այլ սահմանափակումների պահանջներին: Նշված ժամանակահատվածում տրվել է նաև Հանձնաժողովի գործառույթների առնչությամբ ստացված թվով 24 հարցման պատասխան:



Շահերի բախման վերաբերյալ

Շահերի բախման վերաբերյալ իրականացվել է թվով 9 ուսումնասիրություն (ևս 1 ուսումնասիրություն մեկնարկել է առաջին կիսամյակում, ավարտվել երկրորդ կիսամյակում), որից 3-ի դեպքում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմքեր:

1. «Առաքիչը, որը այսօր վարչապետին առընթեր ՊԿԾ պետ է դարձել, 133 հազար դոլարանոց տուն է գնել», «Armlur.am» լրատվական կայք, 9 հուլիսի, 2025թ:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավար Ռ. Պետրոսյանը «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահն է, իսկ Ռ. Պետրոսյանի կինը՝ Ա. Պետրոսյանը, նույն ՊՈԱԿ-ում կազմակերպադաստիարակչական գծով փոխտնօրեն է աշխատում:

Հրապարակված նյութն ուսումնասիրվել է Ռոմանոս Պետրոսյանի շահերի բախման համատեքստում: Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Ռ. Պետրոսյանը 2018 թվականի հունիսի 4-ից մինչև 2020 թվականի հուլիսի 30-ը զբաղեցրել է Կոտայքի մարզպետի, 2020 թվականի հուլիսի 30-ից մինչև 2021 թվականի

դեկտեմբերի 9-ը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի, իսկ 2021 թվականի դեկտեմբերի 10-ից սկսած և ուսումնասիրությունն ընդգրկող ժամանակահատվածում՝ ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավարի պաշտոնները: Միաժամանակ՝ արձանագրվել է, որ Ռ. Պետրոսյանը հանդիսանում է «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահը: Խորհրդի կազմը, առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա, հաստատվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Միաժամանակ, նկատի ունենալով, ի թիվս այլ մարմինների կողմից կատարվող առաջադրումների, խորհրդի անդամի առաջադրման՝ մարզպետի լիազորությունը՝ ուսումնասիրվել է անդամների թեկնածուների առաջադրումը: Արձանագրվել է, որ խորհրդի կազմում Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռ. Պետրոսյանի թեկնածությունը հաստատվել է 2022 թվականի օգոստոսի 8-ին թիվ 1422-Ա/2 հրամանով՝ որպես գործատուների ներկայացուցիչ (տվյալ դեպքում՝ թեկնածությունը ներկայացվել է Գործատուների միության կողմից՝ նախարարության հարցման հիման վրա), ուստի խորհրդի կազմում Ռոմանոս Պետրոսյանի թեկնածության առաջադրման պահին վերջինս չի զբաղեցրել Կոտայքի մարզպետի պաշտոնը: Միևնույն ժամանակ, Ռոմանոս Պետրոսյանի կինը՝ Արմինե Պետրոսյանը, «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի պաշտոնում նշանակվել է 2020 թվականի հուլիսի 22-ին՝ նախքան Ռոմանոս Պետրոսյանի՝ նույն ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդում ընդգրկվելը: «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազոր պետական մարմինը, հաստատության գործադիր մարմինը (տնօրեն) և խորհուրդը: Քննարկվող ՊՈԱԿ-ի պարագայում փոխտնօրենը չի հանդիսանում գործադիր մարմին, ուստի, վերջինիս աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում, նրա նկատմամբ խրախուսանքի միջոցներ կիրառում և կարգապահական տույժեր է նշանակում քոլեջի տնօրենը: Թեև Արմինե Պետրոսյանի պաշտոնի ստանձնման պահին նրա ամուսինը՝ Ռոմանոս Պետրոսյանը զբաղեցրել է Կոտայքի մարզպետի պաշտոնը,

այդուհանդերձ, ՊՈԱԿ-ի փոխտնօրենի նշանակման գործընթացում մարզպետն ի պաշտոնե չունի/չի ունեցել որևէ ներգրավվածություն, հետևապես Ռոմանոս Պետրոսյանի կողմից հնարավոր շահերի բախման հարցի քննարկման հիմքեր առկա չեն եղել: Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:

2. «Արարատի համայնքապետարանը 674 մլն դրամի պայմանագիր է կնքել ավագանու անդամի եղբոր ընկերության հետ», «Հետք» լրատվական կայք, 18 հուլիսի, 2025 թ.:

Համաձայն հրապարակման՝ Արարատ համայնքի Արմաշ բնակավայրի 3 փողոցների ասֆալտապատման նպատակով 2025 թվականի մայիսի 23-ին Արարատի համայնքապետարանը պայմանագիր է կնքել «Արարատ-ճանշին» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրի արժեքը կազմել է 115 մլն 716 հազար դրամ: «Արարատ-ճանշին» ՍՊԸ-ի սեփականատերը Արարատ համայնքի ավագանու նախկին անդամ Սամվել Վարդանյանի եղբայր Ստեփան Վարդանյանն է: Սամվել Վարդանյանն ավագանու անդամ է ընտրվել 2021 թվականին: Համաձայն հրապարակման՝ 2022-2025 թվականներին, երբ Սամվել Վարդանյանը ավագանու անդամ էր, Արարատի համայնքապետարանը նրա եղբորը պատկանող ընկերության հետ կնքել է 12 պայմանագիր, որոնց ընդհանուր արժեքը 674 մլն 690 հազար դրամ է: Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Ասլան Ավետիսյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2025 թվականներին, Սամվել Վարդանյանի համայնքի ավագանու անդամ լինելու ժամանակահատվածում, «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության հետ կնքել է 11 գնման պայմանագիր: 2008 թվականից ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը Ստեփան Վարդանյանն է, ով, համաձայն հրապարակման, ավագանու անդամ Սամվել Վարդանյանի եղբայրն է: Հանձնաժողովն ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ թեև Ասլան Ավետիսյանը և Սամվել Վարդանյանը Արարատ համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել միևնույն կուսակցության ընտրացուցակով, այդուհանդերձ, չեն հանդիսանում նույն կուսակցության անդամ: Ավելին, Ասլան Ավետիսյանն

անկուսակցական է: Սամվել Վարդանյանը գործնական հարաբերությունների մեջ է գտնվում վերոնշյալ ընկերության հետ՝ որպես փոխտնօրեն: Գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներ չեն արձանագրվել, ուստի Հանձնաժողովը հրապարակման առարկան քննարկել է միայն Հանձնաժողովին համայնքի ղեկավարի կողմից շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու համատեքստում: Հաշվի առնելով այն, որ Ասլան Ավետիսյանը «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության հետ 2024 թվականի սեպտեմբերի 2-ին և 2025 թվականի մայիսի 23-ին համապատասխանաբար՝ թիվ «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-24/20» և «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ25/15» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրեր կնքելուց առաջ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չի ներկայացրել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, Հանձնաժողովը Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի նկատմամբ հարուցել է ՎԻՎ/175/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը: Հանձնաժողովի՝ 2025 թվականի օգոստոսի 15-ի նիստով արձանագրվել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում, Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնություն ապահովված չլինելու հանգամանքով պայմանավորված, վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/175/2025 գործով որոշում չի կայացվել:

3. «Վանաձորի ավագանու անդամներին փոխկապակցված ընկերությունները միլիոնավոր դրամների պայմանագրեր են կնքել համայնքի հետ», «Infocom.am» լրատվական կայք, 12 սեպտեմբերի, 2025 թ.:

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Վանաձորի համայնքապետարանը 2019-2025 թվականներին 260 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու անդամ Յանա Հովսեփյանի հոր՝ Հայկ Հովսեփյանի մասնակցությամբ

«Վանտեխմատ» ՍՊ ընկերության հետ: Միաժամանակ, ըստ հրապարակման՝ 2020-2024 թվականներին համայնքապետարանը մոտ 1.4 մլրդ ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել «Ռ. Ղազարյան» ՍՊ ընկերության հետ, որի միակ մասնակից Ռիմա Ղազարյանը բարեկամական կապի մեջ է գտնվում համայնքի ավագանու մեկ այլ անդամի՝ Հայկազ Մովսիսյանի հետ:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Վանաձորի համայնքապետարանը 2023-2025 թվականներին «Վանտեխմատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է 3 գնման պայմանագիր: 2023 թվականի հունվարի 16-ից ընկերության միակ մասնակիցը հանդիսացել է Հայկ Հովսեփյանը, ով Վանաձոր համայնքի ավագանու անդամ Յանա Հովսեփյանի հայրն է: 2019 թվականի հուլիսի 16-ից ընկերության գործադիր մարմնի ղեկավարը Ա. Մելիքյանն է: Նույն ժամանակահատվածում ևս երեք պայմանագիր կնքվել է «Ռ. Ղազարյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ: Ստեղծման պահից ընկերության միակ մասնակիցը հանդիսացել է Ռիմա Ղազարյանն, իսկ գործադիր մարմնի ղեկավարը՝ 2020 թվականի հունիսի 05-ից՝ Ա. Աբրահամյանը:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի և նշված ընկերությունների մասնակիցների/տնօրենների միջև Օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով փոխկապակցվածություն չի արձանագրել: Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ Արկադի Փելեշյանի և Յանա Հովսեփյանի միջև Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով բացակայում է քաղաքական կապը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արկադի Փելեշյանն անկուսակցական է:

Վերոնշյալի հաշվառմամբ, վարույթի հարուցման հիմքերի բացակայությամբ պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:

4. *«Արթիկ համայնքի 2022-2024 թվականներին 492 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ղեկավարած ընկերությունից»*, *«Infocom.am» լրատվական կայք, 22 սեպտեմբերի, 2025 թ.:*

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Արթիկի համայնքապետարանը 2022-2024 թվականներին 492 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գնումներ է կատարել «Այ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունից: Նույն հրապարակման համաձայն՝ 2023 թվականի փետրվար ամսից Ընկերության 100% բաժնետեր է դարձել Պավլիկ Ռափյանը, իսկ 2022 թվականից ընկերության գործադիր մարմնի ղեկավար է հանդիսանում Պավլիկ Ռափյանի եղբայրը՝ Արթիկ համայնքի ավագանու անդամ Արտակ Ռափյանը:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Միաժամանակ, հաշվի առնելով շահերի բախման իրավակարգավորումների, մասնավորապես՝ փոխկապակցված անձանց շրջանակի ընդլայնման և Հանձնաժողովին շահերի բախման իրավիճակի վերաբերյալ գրավոր հայտարարություն չներկայացնելու համար վարչական պատասխանատվության նախատեսման վերաբերյալ կատարված օրենսդրական փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը (2023 թվականի հունվարի 2), սույն ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են 2023 թվականից հետո կնքված պայմանագրերը:

Հանձնաժողովը իրեն հասանելի բաց աղբյուրների և գնման տեղեկագրերի ուսումնասիրությամբ պարզել է, որ 2023-2024թթ. Արթիկի համայնքապետարանը համապատասխան գնման ընթացակարգերի արդյունքում Ընկերության հետ կնքել է թվով 3 պայմանագիր, հետևյալ ծածկագրերով՝ ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/56/3, ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42, ՇՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/30/1: Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են գնումների քննարկվող գործընթացների վերաբերյալ տվյալները: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի իմաստով Անանիկ Ոսկանյանի և Արտակ Ռափյանի միջև բացակայում է քաղաքական փոխկապակցվածությունը՝ վերջիններս տարբեր կուսակցության անդամներ են հանդիսանում: Իսկ ինչ վերաբերում է վերջիններիս միջև անձնական հարաբերությունների՝ մասնավորապես՝ սերտ անձնական հարաբերությունների առկայությանը, ապա այն փաստող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես սույն հրապարկման, այնպես էլ Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական

և այլ բաց աղբյուրների ուսումնասիրությամբ չեն բացահայտվել: Վերոնշյալի հաշվառմամբ Հանձնաժողովը վարույթ հարուցելու հիմքեր չի արձանագրել:

5. «Վարչության պետի ՀԿ-ն 16 մլն դրամ է ստացել քաղաքապետարանից առանց մրցույթի», «Factor.am» լրատվական կայք, 3 հոկտեմբերի, 2025 թ.:

Հրապարակման համաձայն՝ Երևանի բյուջեից 16,7 մլն դրամ է հատկացվել քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժ/պ Գ. Ղարիբյանի հիմնադրած «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» ՀԿ-ին՝ «Հուզական աջակցության թեժ գծի» ծառայության համար: Գումարը հասարակական կազմակերպությանը տրվել է առանց մրցույթի՝ հաշվի առնելով ծրագրի մասին ՀԿ-ի դիմումը և քաղաքապետարանի համապատասխան վարչության ուսումնասիրության արդյունքները:

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, այլ բաց աղբուրների ուսումնասիրությամբ պարզել է, որ Երևանի քաղաքապետարանի Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» ՀԿ-ին ֆինանսական աջակցության տրամադրման արդյունքում իրականացվող գործունեության վերահսկողությունն իրականացվում է նույն վարչության կողմից: Միաժամանակ, վարչության պետ Գ. Ղարիբյանը հանդիսանում է նաև «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» ՀԿ համահիմնադիրը և ծրագրերի հասարակական հիմունքներով կլինիկական և գիտական ղեկավարը: Քաղաքապետարանի համապատասխան վարչության կողմից «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» ՀԿ-ին տրամադրված աջակցության հիմքերն ու ընթացակարգը բաց աղբյուրների ուսումնասիրությամբ ևս չեն հայտնաբերվել: Հանձնաժողովը, սույն դեպքը քննել է շահերի բախման կարգավորումների, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջների համատեքստում:

Հաշվի առնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված լիազորությունները՝ Հանձնաժողովը

Գևորգ Ղարիբյանի կողմից շահերի բախման իրավիճակների կանխարգելման հարցում հետամուտ լինելու առաջարկով դիմել է իրավասու մարմնին՝ Երևանի քաղաքապետին: Արդյունքում, Հանձնաժողովը քաղաքապետարանից պատասխան է ստացել առ այն, որ Երևանի քաղաքապետի համապատասխան հանձնարարականով «Հուզական աջակցության թեժ գծի» ծրագրի վերահսկողությունը վերապահվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալին:

6. «Մարտունու համայնքապետարանը շուրջ 741 մլն դրամի պայմանագրեր է կնքել ավագանու անդամի ընկերության հետ», «Infocom.am» լրատվական կայք, 03 հոկտեմբերի, 2025 թ.:

Ըստ հրապարակման՝ Մարտունու համայնքապետարանը 2022-2025 թվականներին շուրջ 741 մլն դրամի պայմանագրեր է կնքել «Կոթաշին» ՍՊ ընկերության հետ: Նույն համայնքի ավագանու անդամ Պապ Դանիելյանը 2022 թվականին դարձել է «Կոթաշին» ընկերության սեփականատերն ու տնօրենը: 2025 թվականի ապրիլին ընկերության սեփականատեր և տնօրեն է դարձել ավագանու անդամի կինը՝ Լ. Սերոբյանը: 2025 թվականին (ընկերության մասնակցի և գործադիր մարմնի փոփոխությունից հետո) համայնքապետարանը նշված ընկերության հետ կնքել է 216 մլն դրամ արժողությամբ պայմանագիր: Համայնքապետ Հովհաննես Հովեյանը և ավագանու անդամ Պապ Դանիելյանը ավագանու նույն խմբակցությունից են և հանդիսանում են նույն կուսակցության անդամներ:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Մարտունու համայնքապետարանը «Կոթաշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2023-2025 թվականներին կնքել է 6 գնման պայմանագիր, որից հինգի կնքման պահին ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը հանդիսացել է Պապ Դանիելյանը: Հովհաննես Հովեյանը և Պապ Դանիելյանը Մարտունի համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել նույն կուսակցության ընտրացուցակով,

հանդիսանում են նույն կուսակցության անդամ, հետևաբար, նրանց միջև առկա են քաղաքական հարաբերություններ: Հովհաննես Հովեյանը, գործող օրենսդրական կարգավորումների համաձայն, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, նախքան սույն պայմանագրերի կնքումը պարտավոր էր Հանձնաժողով ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, ինչը սակայն չի կատարել: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում: Միևնույն ժամանակ՝ նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Հաշվի առնելով, որ վերոնշյալ անձանց միջև վերջին պայմանագիրը կնքվել է 2024 թվականի հուլիսի 24-ին՝ վարչական տույժի նշանակման անհնարինությամբ պայմանավորված՝ վարույթ հարուցելու նպատակահարմարությունը բացակայել է: Միաժամանակ, Հովհաննես Հովեյանի և Լ. Սերոբյանի փոխկապակցվածությունը հաստատող բավարար տեղեկությունների բացակայությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:

7. «Չարենցավանի համայնքապետարանը կառավարող խմբակցության հետ կնքել է 478 մլն դրամի պայմանագրեր», «infocom.am» լրատվական կայք, 09 հոկտեմբերի, 2025 թ.:

Համաձայն հրապարակման՝ Չարենցավանի համայնքապետարանը 2023-2025 թվականների ընթացքում ընդհանուր շուրջ 478 մլն դրամի 4 պայմանագիր է կնքել համայնքում իշխող խմբակցության ավագանու անդամ Տարոն Եփրեմյանին պատկանող «Աշկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ: 2023 թվականի մայիսին ընկերությունը համայնքում իրականացրել է ասֆալտապատման և փոսային նորոգման ավելի քան 24 մլն դրամի

աշխատանքներ։ 2025 թվականին համայնքապետարանը նույն ընկերության հետ կնքել է ընդհանուր ավելի քան 453 մլն դրամ արժողությամբ 3 պայմանագիր։ Դրանցից առաջինը կնքվել է փետրվարին, որի համաձայն ընկերությունը 389 մլն դրամի դիմաց պետք է իրականացներ «Լուսաբաց» մսուր մանկապարտեզի նորոգումը։ Մյուս երկու պայմանագրերը կնքվել են նույն թվականի սեպտեմբերի 4-ին։ Ընկերությունը պետք է հիմնանորոգեր «Քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի մասնաշենքը և Բջնի գյուղում կառուցեր խաղահրապարակ։ Գնման երկու ընթացակարգերում միակ մասնակից է հանդիսացել Տ. Եփրեմյանի ընկերությունը։ Երկու պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 64 մլն դրամ։

Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Հակոբ Շահգալդյանը, որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2023-2025 թվականներին, Տարոն Եփրեմյանի համայնքի ավագանու անդամ լինելու ժամանակահատվածում, «Աշկար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է 4 գնման պայմանագիր։ Հիմնադրումից (2005 թվական) ի վեր ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը Տարոն Եփրեմյանն է։

Հակոբ Շահգալդյանը և Տարոն Եփրեմյանը Չարենցավան համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու են առաջադրվել և ընտրվել նույն դաշինքի ընտրացուցակով։ Համաձայն Հակոբ Շահգալդյանի և Տարոն Եփրեմյանի ներկայացրած հայտարարագրերի և Համայնքապետարանի կայքի տվյալների՝ նրանք որևէ կուսակցության չեն անդամակցում, հետևաբար, նրանց միջև, Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, առկա չեն քաղաքական հարաբերություններ։ Այդուհանդերձ Հանձնաժողովն արձանագրել է գործնական հարաբերությունների առկայությունը։

Գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների առերևույթ խախտումներ չեն արձանագրվել, ուստի Հանձնաժողովը հրապարակման առարկան քննարկել է միայն Հանձնաժողովին շահերի բախման մասին գրավոր հայտարարություն չներկայացնելու

համատեքստում: 2023 թվականին և 2025 թվականի փետրվար ամսում կնքված գործարքի մասով համայնքի ղեկավարը նման քայլեր չի ձեռնարկել:

Այսպիսով, Հակոբ Շահգալդյանը պայմանագրերի կնքման երկու շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտավորությունը չի կատարել: Վերոգրյալի հիման վրա, **ՉՀ-ԲՄԱՇՁԲ-2025/1** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքներով սույն թվականի փետրվարի 5-ին Հակոբ Շահգալդյանի կողմից կնքված պայմանագրերի վերաբերյալ Հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին համապատասխան հայտարարություն չներկայացնելու հիմքով հարուցվել է ՎԻՎ/476/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ և Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 03-ի որոշմամբ կիրառվել վարչական տույժ: Վարչական տույժ կիրառելու մասին որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/12/00-18.pdf:

8. «Ստեփանավանի համայնքապետի կնոջ ընկերությունները հաղթել են համայնքային և պետական գնումներում», «Հետք» *լրատվական կայք, 12 նոյեմբերի, 2025 թ.:*

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ստեփանավան համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի կնոջը պատկանող «Սոճենի» ՍՊ ընկերությունը պետական և համայնքային գնումներին 468 մլն դրամի պայմանագրեր է կնքել:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ 2024 թվականի մայիսի 6-ից «Սոճենի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի կինը՝ Գ. Ավետիսյանն է, ով մինչև 2025 թվականի հոկտեմբերի 28-ը զբաղեցրել է նաև գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնը: Ընկերությունը 2024 թվականին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքել է մեկ, Տաշիրի համայնքապետարանի հետ՝ երկու գնման պայմանագիր:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Ստեփանավանի համայնքապետարանի ու Արմեն Գրիգորյանի կնոջ բաժնեմասնակցությամբ «Ստեփշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացման պայմանագիր կնքվել է 2020 թվականի սեպտեմբերի 11-ին, երբ Արմեն Գրիգորյանը դեռևս չէր զբաղեցնում համայնքի ղեկավարի պաշտոնը:

Արմեն Գրիգորյանի՝ համայնքի ղեկավարի պաշտոնում պաշտոնավարման ժամանակաշրջանում, վերջինիս կնոջ մասնակցությամբ ընկերությունների հետ գնման պայմանագրեր չի կնքել, ըստ այդմ՝ Հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման հիմքեր չեն բացահայտվել:

9. «1 մլրդ դրամի պայմանագրեր՝ Արտաշատի ավագանու անդամ Կարեն Ղազարյանի ընկերության հետ», «Հետք» լրատվական կայք, 19 նոյեմբերի, 2025 թ:

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Արտաշատի ավագանու ընտրություններում հաղթած երկրորդ ուժի ղեկավար Կարեն Ղազարյանը նաև ձեռնարկատիրությամբ է զբաղվում, ունի մի քանի ընկերություն, որոնցից մեկը՝ «Գլոբուս շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, մասնակցում է Արտաշատ համայնքի գնումներին: Ղազարյանն այս ընկերության 100% բաժնետեր է դարձել 2024 թվականի մայիսի 03-ին, և մինչ օրս Արտաշատ համայնքի հայտարարած երեք գնումներում հաղթող է ճանաչվել: Դրանցից մեկ դեպքում գնման գործընթացին մասնակցել է «Արտ պլաս» և «Աշիկյան Քոնսթրաքշն» ՍՊԸ-ների հետ կոնսորցիումով: Ընդ որում, «Աշիկյան Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակիցը և գործադիր մարմնի ղեկավարը համայնքի ավագանու մեկ այլ անդամ Արտակ Աշիկյանն է:

Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ Արտաշատի համայնքապետարանը «Գլոբուս շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2023-2025 թվականներին

կնքել է 3 գնման պայմանագիր: Եվս մեկ պայմանագիր կնքել է «Գլոբուս շին», «Արտ պլաս» և «Աշիկյան Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումի հետ:

Կառլեն Մկրտչյանը Արտաշատ համայնքի ավագանու ընտրություններին ավագանու անդամի թեկնածու է առաջադրվել և ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրացուցակով, իսկ Կարեն Ղազարյանը և Արտակ Աշիկյանը՝ «Օրենք և արդարություն» կուսակցության ընտրացուցակով: Համաձայն վերջիններիս ներկայացրած հայտարարագրերի և համայնքապետարանի կայքի տվյալների՝ վերջիններս հանդիսանում են նույն կուսակցության անդամ: Հետևաբար՝ համայնքի ղեկավարի՝ Կառլեն Մկրտչյանի և ավագանու անդամների՝ Կարեն Ղազարյանի և Արտակ Աշիկյանի միջև, Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, առկա չեն քաղաքական հարաբերություններ: Ուսումնասիրության շրջանակներում նաև չեն բացահայտվել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների միջև Օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով այլ հարաբերությունների առկայությունը հավատող փաստական հանգամանքներ: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը կարևոր է համարել արձանագրվել է, որ պայմանագրի կնքման պահին «Գլոբուս շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից Կարեն Ղազարյանը չէր զբաղեցնում ընկերության գործադիր մարմնի պաշտոնը, ընկերության բաժնեմասի կառավարումը հանձնել է հավատարմագրային կառավարման, ուստի վերջինս պայմանագրի կողմ չի հանդիսացել:

Հաշվի առնելով, որ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու նշված անդամների միջև փոխկապակցվածության արձանագրման բավարար հիմքեր առկա չէին, Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ավարտել է նաև 2025 թվականի առաջին կիսամյակում իրականացված 1 մեդիա հրապարակման ուսումնասիրություն.

1. *«Իջևան համայնքը 275 մլն դրամի գնումներ է կատարել ավագանու անդամներին փոխկապակցված ընկերություններից», «Infocom.am», 26 հունիսի, 2025 թ.:*

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Իջևանի համայնքապետարանը 2022-2025 թվականներին 193 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանի հոր՝ «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ: Համայնքապետարանը նույն ժամանակահատվածում ևս 79.8 մլն ՀՀ դրամի գնման պայմանագրեր է կնքել համայնքի ավագանու մեկ այլ անդամի՝ Խաչատուր Համզյանի հետ փոխկապակցված «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ու «Փառանձեմ Նազինյան» անհատ ձեռնարկատիրոջ հետ: Բացի դրանից, համայնքապետարանը 2024 թվականին համայնքի ավագանու անդամ Նաիրի Ջանվելյանի հետ՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, կնքել է աշխատանքների ձեռքբերման պայմանագիր՝ 980 000 ՀՀ դրամ արժեքով: Հրապարակման հիման վրա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում: Հանձնաժողովն իրեն հասանելի տեղեկատվական աղբյուրների, գնումների տեղեկագրի տվյալների ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ Արթուր Ճաղարյանը՝ որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022-2024 թվականներին համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է գնման չորս պայմանագիր: Իջևան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանի և համայնքի ավագանու անդամ Խաչատուր Աթաբեկյանի միջև, նույն կուսակցության անդամ լինելու հիմքով, առկա է քաղաքական կապ: Միևնույն ժամանակ, Խաչատուր Աթաբեկյանը անձնական հարաբերություններով է կապված «Արտարս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակից և գործադիր մարմնի ղեկավար Արթուր Աթաբեկյանի հետ: Այդուհանդերձ, հաշվի առնելով պայմանագրերի կնքման ժամկետները, վարչական տույժ նշանակելու հիմքերը բացակայել են:

Հրապարակման մեկ այլ դրվագի ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել է, որ Արթուր Ճաղարյանը՝ որպես համայնքի ղեկավար և պատվիրատուի ղեկավար, 2022 թվականին և 2024 թվականին համայնքի կարիքների համար հիմնանորոգման աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է երեք գնման պայմանագիր: Արթուր Ճաղարյանի և Իջևան համայնքի ավագանու անդամ Խաչատուր Համզյանի միջև առկա են քաղաքական հարաբերություններ՝ նույն կուսակցության անդամ լինելու հիմքով: Պայմանագրերի կնքման ժամանակահատվածում Խաչատուր Համզյանը հանդիսացել է «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Կնքված մեկ պայմանագրի դեպքում վերջինս հանդիսացել է նաև ընկերության միակ մասնակիցը: Հրապարակման վերջին դրվագով պարզվել է, որ Արթուր Ճաղարյանը 2024 թվականին ծառայության գնման պայմանագիր է կնքել նաև Իջևան համայնքի ավագանու անդամ Նաիրի Ջանվելյանի (անհատ ձեռնարկատեր) հետ: Վերջիններիս միջև ևս առկա է քաղաքական կապ՝ նույն կուսակցության անդամ լինելու հիմքով: Նախքան «Հանրային ծառայության մասին» օրենքում 2022 թվականի դեկտեմբերի 7-ին կատարված փոփոխություններն ուժի մեջ մտնելը՝ 2023 թվականի հունվարի 2-ը, պաշտոն զբաղեցնող անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը հիմնականում ներառում էր պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական կամ խնամիական կապերով կապված անձանց: Այդ համատեքստում, նշված ժամանակահատվածում համայնքի ղեկավարը համայնքի ավագանու անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձանց հետ կնքված պայմանագրերի մասով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորություն չի ունեցել: Ելնելով վերոգրյալից՝ Արթուր Ճաղարյանն ունեցել է պարտավորություն «Խաչմիշշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Նաիրի Ջանվելյան» Ա/Ձ-ի հետ մեկական պայմանագրերի կնքման շրջանակներում Հանձնաժողով ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն, ինչը, սակայն, չի կատարվել: Շահերի բախման վերաբերյալ

կարգավորումները խախտելու հիմքով Արթուր Ճաղարյանի նկատմամբ հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ և կիրառվել վարչական տույժ: Վարչական տույժ կիրառելու մասին Հանձնաժողովի՝ 2025 թվականի հուլիսի 21-ի ՎԻՎ/163/2025 որոշումը հասանելի է հետևյալ հղումով՝ https://shorturl.at/duzIH:

Այլ սահմանափակումների պահանջների վերաբերյալ

1. «Ջումայանը ՀԱՊԱԿ տնօրենի ԺՊ է նշանակվել «Հանրային ծառայության մասին» օրենքի խախտումո՞վ», «News.am», 1 դեկտեմբերի, 2025 թ.:

Ըստ հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Առողջապահության նախարարի նախկին տեղակալ Արտակ Ջումայանը, ինչը հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պահանջի խախտման:

Հանձնաժողովը, հրապարակման առարկան ուսումնասիրել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց օրենքով ներկայացվող սահմանափակումների, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված պահանջի համատեքստում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Առողջապահության նախարարի տեղակալի լիազորություններից ուղղակիորեն չի բխում որևէ կազմակերպության անմիջական նկատմամբ անմիջական հսկողության իրականացումը: Վերջիններիս կողմից իրականացվում են բացառապես համակարգման գործառույթներ: Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Առողջապահության նախարարի նախկին տեղակալ Ա. Ջումայանը չի հանդիսացել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության նկատմամբ անմիջական հսկողություն իրականացնող անձը, հետևապես՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված այլ սահմանափակումների առերևույթ խախտման հատկանիշներ չեն արձանագրվել:

2. Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում ամփոփվել է նախորդ կիսամյակում ուսումնասիրվող հետևյալ մեդիա հրապարկումը՝

«Վարդան Ղուկասյանի փեսան և ընկերն ընտրվեցին Գյումրու առաջին և երկրորդ փոխքաղաքապետ. ՔՊ-ն ձեռնպահ է քվեարկել», *«Armtimes.com» լրատվական կայք, մայիսի 2, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ 2025 թվականի մայիսի 2-ին տեղի ունեցած՝ Գյումրի համայնքի ավագանու նիստում Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալներ են ընտրվել համայնքի ղեկավարի փեսան՝ Ավետիս Առաքելյանը և ընկերը՝ Գագիկ Մանուկյանը: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրության է առել համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների, և համայնքի ղեկավարի տեղակալի՝ այլ սահմանափակումների պահպանման համատեքստում:

Ուսումնասիրության շրջանակներում պարզ է դարձել, որ Ավետիս Առաքելյանի թեկնածությունը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնում ներկայացվել է Վարդան Ղուկասյանի կողմից, ինչը «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում դիտարկվել է որպես մասնավոր շահով պայմանավորված գործողություն՝ հանգեցնելով նույն օրենքի 33-րդ հոդվածի պահանջների առերևույթ խախտման, ինչի հիմքով Վարդան Ղուկասյանի նկատմամբ հարուցվել է համապատասխան վարույթ, որն ավարտվել է Հանձնաժողովի՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ի N 03/2025/Ծ/Վ եզրակացությամբ: Եզրակացությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://surli.cc/cpzfqb:

Հանձնաժողովը, ուսումնասիրության շրջանակներում հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների համապատասխան կարգավորումները, գտել է նաև, որ համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի և համայնքի ղեկավարի տեղակալ Ավետիս Առաքելյանի միջև առկա են անմիջական վերադասության-ենթակայության հարաբերություններ՝ հիմք ընդունելով այն հանգամանքները, որ համայնքի ղեկավարն է համայնքի ղեկավարի տեղակալին տալիս անմիջական կատարման հանձնարարություններ, իսկ համայնքի ղեկավարի տեղակալն իր հերթին հանձնարարականների կատարման մասին հաշվետու է համայնքի ղեկավարին: Միաժամանակ, Ավետիս

Առաքելյանի համար Վարդան Ղուկասյանը համարվում է խնամիությամբ կապված անձ, ուստի վերջիններս չեն կարող պաշտոնավարել անմիջական ենթակայության-վերադասության պայմաններում: Այլ սահմանափակման կարգավորումները առերևույթ խախտելու հիմքով Ավետիս Առաքելյանի նկատմամբ հարուցվել է համապատասխան վարույթ: Արդյունքում Հանձնաժողովը 2025 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունել է N 01-2025-Ա/Ս եզրակացությունը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://surl.li/jdsesn:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը:

Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2025 թվականին նախաձեռնել է ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները զբաղեցնող անձանց շրջանում անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում, որի արդյունքները Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակվել են 2025 թվականի դեկտեմբերի 29-ին:

Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից հաստատված պլանի համաձայն, որը հաստատվել է Հանձնաժողովի 2025 թվականի մարտի 20-ի N 02-L որոշմամբ՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/03/00-20.pdf: Հայաստանի Հանրապետությունը կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ստանձնել է միջազգային պարտավորություններ. մասնավորապես, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի շրջանակներում դիտարկվել է բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում

բարեվարքության խթանումը և կոռուպցիայի կանխարգելումը, որի համատեքստում՝ 2024 թվականի մարտին հաստատվել է Հայաստանի գնահատման զեկույցը՝ պետությանը ներկայացնելով համապատասխան հանձնարարականներ՝ նշված սուբյեկտային կազմի բարեվարքության խթանման ուղղությամբ: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովի կողմից 2025 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային պաշտոններ սահմանվել են ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների և վերջիններիս տեղակալների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, փոխվարչապետերի, նախարարների խորհրդականների պաշտոնները՝ ընդհանուր թվով 114 պաշտոնատար անձ: Հարկ է նկատել, որ պաշտոնների և վերջիններիս գործառույթների ռիսկայնությունը գնահատելիս ԳՐԵԿՈ-ի կողմից, ի թիվս այլնի, հիմք են ընդունվել վերջիններիս՝ կառավարման համակարգում ունեցած կարգավիճակը, նշանակման գործընթացը, որոշումների կայացման առանձնահատկությունները, վարձատրության կարգը և այլ հանգամանքներ:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրերը՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում վերջիններիս հնարավոր մասնակցությունը կամ գործադիր մարմնում ներկայացվածությունը պարզելու նպատակով: Արդյունքում արձանագրվել է, որ՝

- 114 պաշտոնատար անձանցից 20-ի հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ: Առևտրային կազմակերպություններում մասնակցության և/կամ ներկայացվածության վերաբերյալ բերված վիճակագրությունը վերաբերերում է վարչապետի, փոխվարչապետի, վարչապետի 1 խորհրդականի, փոխվարչապետի 2 խորհրդականի, 2 նախարարի, նախարարի 4 տեղակալի, նախարարի 9 խորհրդականի:
- 3 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը

մասնակցել են հանրային գնումների գործընթացների, որոնցից 1 դեպքում պատվիրատու է հանդիսացել մարզպետարանը, մյուս 2 դեպքում՝ տարբեր համայնքներ:

- 114 պաշտոնատար անձանցից 78-ը երբևէ չեն ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային կազմակերպություններում:
- 114 պաշտոնատար անձանցից 36-ը տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն կամ ներկայացվածություն են ունեցել/ունեն առևտրային կազմակերպություններում կամ հաշվառված են եղել/հաշվառված են որպես անհատ ձեռնարկատեր:
- Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձանցից ընդհանուր թվով հինգը պաշտոնավարման ընթացքում փաստացի ունեցել են մասնակցություն գործող առևտրային կազմակերպություններում: Բոլոր այն դեպքերում, երբ առևտրային կազմակերպությունները եղել են փաստացի գործող, Հանձնաժողովը հավելյալ գնահատման է արժանացրել հավատարմագրային կառավարման պահանջների պահպանումը: Արդյունքում արձանագրվել է, որ երկու դեպքում պաշտոնատար անձի բաժնեմասն օրենքի պահանջներին համապատասխան հանձնված է եղել հավատարմագրային կառավարման: Երկուսի դեպքում Հանձնաժողովը «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցել է վարույթ, որոնցից մեկը եզրափակվել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայության մասին եզրակացությամբ, իսկ երկրորդը՝ դրա բացակայությամբ:
- Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է նաև պաշտոն զբաղեցնող անձանց առևտրային արժեթղթեր ունենալու հանգամանքը և առկայության դեպքում դրանց սահմանաչափերը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ 114 պաշտոնատար անձից 4-ը պաշտոնավարման ընթացքում տիրապետել են բաժնային կամ պարտքային արժեթղթերի:

Մասնավորապես, պաշտոնատար 3 անձ ունեցել է պարտատոմսեր, մեկ անձ՝ ցուցակված ընկերության՝ առևտրի թույլատրված բաժնային արժեթղթեր: Առևտրի թույլատրված արժեթղթերի քանակը չի գերազանցել օրենքով սահմանված թույլատրելի շեմը: Միաժամանակ, արձանագրվել է, որ 1 պաշտոնատար անձ 2024 թվականի իր տարեկան հայտարարագրում չի հայտարարագրել օտարված արժեթղթերից ստացված եկամուտը: Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են նաև նախարարի տեղակալի պաշտոն զբաղեցնող 4 անձի և նախարարի խորհրդականի պաշտոն զբաղեցնող 3 անձի կողմից այլ աշխատանք կատարելու, ինչպես նաև այլ աշխատանքի դիմաց վարձատրության ստացման վերաբերյալ տվյալները՝ մասնավորապես՝ վերջիններիս կողմից 2024 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրած այլ եկամուտները և Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների վերաբերելի տվյալները: Արդյունքում արձանագրվել է, որ 3 պաշտոնատար անձի դեպքում վերջինիս հայտարարագրում առկա այլ եկամուտից ստացված եկամուտը եղել է կրթական աշխատանքի համար ստացված վարձատրություն, 2 դեպքում արձանագրվել է, որ պաշտոնատար անձինք պաշտոնավարմանը զուգահեռ զբաղվում են գիտական աշխատանքով, 1 դեպքում՝ այլ վճարովի աշխատանքի դիմաց հայտարարագրված եկամուտը հանդիսացել է անձի նախկին աշխատավայրից ստացած վարձատրությունը: Միաժամանակ, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցվել է 1 վարույթ, սակայն Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է՝ հաշվի առնելով եզրակացության կայացման պահին անձի կողմից հանրային պաշտոնից ազատված լինելու հանգամանքը:

Մշտադիտարկման շրջանակներում, ի թիվս անհամատեղելիության պահանջներին առնչվող խախտումների, արձանագրվել են 26 անձանց, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների կողմից հայտարարագրմանը ներկայացվող պահանջների խախտման դեպքեր, մասնավորապես՝ հայտարարագրման ենթակա

տվյալների չհայտարարագրման կամ թերի հայտարարագրման, որոշ դեպքերում՝ հայտարարագրերի չներկայացման դրսևորումներով, ինչի շրջանակներում իրականացվել են Հանձնաժողովի լիազորություններից բխող գործընթացներ:

Մշտադիտարկման ողջ գործընթացի և արձանագրված խախտումների, ինչպես նաև ընդհանուր վիճակագրության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/12/%D5%A1%D5%B4%D6%83%D5%B8%D6%83%D5%AB%D5%B9-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf:

Վարքագծի կանոնների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վարքագծի կանոնների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա թվով 10 ուսումնասիրություն: Մեկ դեպքում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ, ևս 2 դեպքում՝ որոշել է նախաձեռնել վարույթ, սակայն վարույթի հարուցման որոշում հաշվետու ժամանակահատվածում չի ընդունվել:

1. *«ՏԵՍԱՆՅՈՒԹ. Նախարար կա, դասագիրք չկա. կրթական տարվա խայտառակ սկիզբ սեպտեմբերի 1-ին. «Ժողովուրդ»», «Armlur.am» լրատվական կայք, օգոստոսի 28, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մամուլի ասուլիսի ընթացքում դրսևորել է կոպիտ և վիրավորական վարքագիծ լրագրողների նկատմամբ:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 51-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Ուսումնասիրությունը կատարվել է ոչ միայն հրապարակման, այլ նաև քաղաքացու դիմումի հիման վրա, որով ներկայացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և նախարարի՝ մամուլի ասուլիսի շրջանակներում դրսևորած վարքագծի առթիվ վարույթ հարուցելու պահանջ։

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ Կանոնագրքի 51-րդ կետի առերևույթ խախտման կարող է հանգեցնել այն վարքագիծը, որն ունի բացառապես վիրավորելու կամ անհիմն կերպով վարկաբեկելու և ոչ թե քննադատելու նպատակ, կամ այնպիսի վարքագիծը, որը թեև ունի նաև քննադատելու նպատակ, սակայն հատում է իրավաչափ քննադատության սահմանները, օրինակ՝ պարունակում է անձնական բնույթի վիրավորանքներ, գռեհիկ երանգ ունի և այլն։

Հրապարակմամբ նկարագրված արարքի գնահատման շրջանակներում Հանձնաժողովն ուսումնասիրել է Ժաննա Անդրեասյանին տրված հարցերի և նրա ամբողջական պատասխանների բովանդակությունն ու ձևը, դրանց շրջանակներում՝ կոնկրետ արտահայտությունների իմաստն ու նպատակը։ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ժաննա Անդրեասյանի կատարած արտահայտությունները, ինչպես իրենց բովանդակությամբ, այնպես էլ ձևով, չեն կրել անձնական վիրավորանքի բնույթ և հետապնդել են փաստերի ճշտման, հարցը հնչեցրած լրագրողի քննադատման կամ հնչեցված հարցի բնույթը գնահատելու նպատակ։ Չնայած նրան, որ Ժաննա Անդրեասյանի խոսքի մի մասը կրել է կտրուկ կամ կոշտ երանգ, Հանձնաժողովը գտել է, որ այդ հանգամանքը բավարար չէ վարքագծի կանոնի առերևույթ խախտում արձանագրելու համար։ Այսպես, Հանձնաժողովը արձանագրել է, որ սուր կամ անգամ սադրիչ բնույթի հարցեր հնչեցնելը լրագրողների մասնագիտական առաքելության մասն է, որը պետք է հարգանքի արժանանա պաշտոնատար անձանց կողմից։ Միաժամանակ, նման հարցեր հնչեցնելով, լրագրողները պետք է ողջամտորեն ակնկալեն, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք կարող են իրենց պատասխաններում կտրուկ, անգամ կոշտ լինել՝ բարեվարքության սահմանների պահպանմամբ, այն է՝ չկիրառելով անձնական բնույթի վիրավորանքներ, գռեհիկ արտահայտություններ, լրագրողի խոսքին խիստ անհամաչափ տոնայնություն և այլն։

Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն և որոշել է նշված դեպքի առթիվ չհարուցել վարույթ։

2. *«Արևմտյան արժեքները ծաղրող, հայհոյող, եվրոպացիներին չվստահող Վարդան Ղուկասյանը 2009-ին վստահել է ֆրանսիացիներին ու վիրահատվել Փարիզում, նաև՝ տուն գնել»*, *«Civic.am» լրատվական կայք, 28 օգոստոսի, 2025 թ.* և *«Պիդառաստների խոսքը ասնավանի չի... Ռա՛դ եղեք, գիտենք ձեր սեքսուալնի վիճակը. Վարդան Ղուկասյան»*, *«Tribune.am» լրատվական կայք, 25 օգոստոսի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակումների՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը հարցազրույցի ընթացքում կատարել է առերևույթ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն հարուցող արտահայտություններ (օրինակ՝ «Մենք ճանաչում ենք ձեզ, գիտենք ձեր ապրելակերպը և ձեր սեքսուալնիյ վիճակը։ (...) Ռադներդ քաշեք Հայաստանից և հեռու մնացեք հայկական ապրելակերպից։»։

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 37-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը։

Հանձնաժողովն արձանագրել է, որ Կանոնագրքի 37-րդ կետով սահմանված՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը ենթադրում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ատելության խոսքի գործածումից զերծ մնալու պահանջը։

Հրապարակումներով ներկայացված արարքի գնահատման նպատակով Հանձնաժողովն իմաստաբանական վերլուծության է ենթարկել Վարդան Ղուկասյանի գործածած բառերը՝ արձանագրելով, որ դրանցից որոշները վերաբերում են անձանց տարբեր խմբերի, այդ թվում՝ ԼԳԲՏ անձանց, նրանց նկատմամբ աջակցություն կամ հանդուրժողականություն ցուցաբերող անձանց, եվրոպացիների՝

ընդհանուր կերպով, ինչպես նաև իրենց արտաքինով կամ այլ անձնական հատկանիշներով որոշակիորեն տարբերվող այլ անձանց և արտահայտում են նրանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք։ Վերոգրյալի համատեքստում Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարդան Ղուկասյանն իր խոսքով առերևույթ կերպով անհանդուրժողական վերաբերմունք է դրսևորել անձանց խմբերի նկատմամբ՝ այդպիսով հանգեցնելով Կանոնագրքի 37-րդ կետի առերևույթ խախտման։

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված դեպքի առթիվ հարուցել վարույթ։ Միաժամանակ, նկատի ունենալով, որ Վ.Ղուկասյանի խոսքերը, Հանձնաժողովի գնահատմամբ, պարունակել են ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով (Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախատեսված հանցագործության առերևույթ հատկանիշներ՝ Հանձնաժողովը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ դատախազություն՝ մինչ այդ կասեցնելով վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթը։

3. *«Չաղ, գլուխը մեծ էն տղու անունն ի՞նչ է. Վարդան Ղուկասյանը՝ ՔՊ-ական պատգամավորի մասին»*, *«24news.am» լրատվական կայք, 16 սեպտեմբերի, 2025 թ.:*

Համաձայն հրապարակման՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը Ազգային ժողովի պատգամավորի հասցեին կատարել է ենթադրյալ վիրավորական արտահայտություններ («չաղ… գլուխը մեծի անունն ի՞նչ է», «դրան (…) ուղարկում են նարկոդիսպանսեր, ու ասում են, որ ինքը նարկոման ա… Էդի քանծ է, էդի, իրանից ի՞նչ։»)։

Հանձնաժողովը նշված խոսքն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն, ինչպես նաև Կանոնագրքի 37-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող

անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը։

Հանձնաժողովն արձանագրել է, որ Վ.Ղուկասյանի արտահայտություններն ուղղված են եղել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի, ով պետք է առավել մեծ հանդուրժողականություն դրսևորի անգամ առերևույթ ծաղրող կամ հեգնական խոսքի նկատմամբ։ Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ հնչեցված խոսքերը, չնայած իրենց հեգնական բնույթին, անպարկեշտ կամ գռեհիկ չեն եղել և չեն կրել պարզապես վիրավորելու նպատակ. Վ.Ղուկասյանը, մասնավորապես, նպատակ է ունեցել ընդգծելու այն հանգամանքը, որ պատգամավորի՝ իր հասցեին հնչեցված քննադատություններին անդրադառնալը նպատակահարմար չի համարում։

Ըստ այդմ, Հանձնաժողովը նշված դեպքի կապակցությամբ արձանագրել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն և որոշել դրա առթիվ չհարուցել վարույթ։

4. *«#ՀՐԱՏԱՊ ԵԹԵՐ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ. #ՈՒՂԻՂ», «168am.am» լրատվական կայք, 1 հոկտեմբերի, 2025թ., «Մարզպետն էլ, Սարիկն էլ նորմալ տղերք են, էն դոդոշի պես չեն. ես իրենց լեգենդն եմ. Վարդան Ղուկասյան», «168am.am» լրատվական կայք, 1 հոկտեմբերի, 2025թ. «Հաստագլխի մակարդակին չեմ ուզում իջնել. հայոց պետականության դեմ ոտնձգություն անողն իմ թշնամին է. Վարդան Ղուկասյան», «168am.am» լրատվական կայք, 1 հոկտեմբերի, 2025թ. և «Հայ ժողովուրդ, տեսե՛ք, թե մենք ում ենք ընտրել ՀՀ վարչապետ. Վարդան Ղուկասյանի արձագանքը՝ Նիկոլ Փաշինյանին», «news.am» լրատվական կայք, 1 հոկտեմբերի, 2025 թ.։*

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը մամուլի ասուլիսի ընթացքում վիրավորական արտահայտություններ է կիրառել («հաստագլուխ», «սրիկա շան որդի», «թուրքահպատակ շան տղա»)։

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային

պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն, ինչպես նաև Կանոնագրքի 37-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է հարգել վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը։

Հանձնաժողովն իրականացրել է Վ.Ղուկասյանի կիրառած արտահայտությունների իմաստաբանական վերլուծություն՝ արձանագրելով, որ դրանց մի մասն առերևույթ վիրավորական բնույթ ունի։ Այնուամենայնիվ, Հանձնաժողովը կարևորել է, որ նշված արտահայտությունները կատարվել են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քաղաքական բանավեճի շրջանակներում, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն քաղաքական գործիչները, որոնց ուղղված է եղել Վ.Ղուկասյանի խոսքը, տվյալ մամուլի ասուլիսին նախորդող շրջանում ևս գործածել են առերևույթ վիրավորական խոսք, որը մեծապես համարժեք է Վ.Ղուկասյանի կիրառած արտահայտություններին։

Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ Վ.Ղուկասյանի կողմից քննարկված արտահայտությունների կիրառումը ունի նաև իր հասցեին հնչեցված և իր գնահատմամբ՝ զրպարտիչ բնույթի մեղադրանքները հասցեագրելու, դրանք որակելու նպատակ, ուստի չի հետապնդել բացառապես վիրավորելու նպատակ։

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ բացակայում են վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշները և որոշել դեպքի առթիվ չհարուցել վարույթ։

5. *«#ՇՏԱՊ. Վարդան Ղուկասյանը հայտարարությամբ է հանդես գալիս»*, «*mediahub.am*» *լրատվական կայք, 7 հոկտեմբերի, 2025թ.*, *««Կխփենք, եթե չբացես», ավտոմատները լիցքավորում էին, գցեցին գետին ինձ. Վարդան Ղուկասյան»*, «*mediahub.am*» *լրատվական կայք, 7 հոկտեմբերի, 2025 թ.*, և *«Բ-ի տղություն է, ասում են՝ քաղաքապետը ասել է «գուբեռնիա դառնանք». Ղուկասյանը»,* «*mediahub.am*», *7 հոկտեմբերի, 2025թ.* և *«Պիտի այնպես անենք, որ իրենց մուրազը իրենց փորը մնա. Ղուկասյանը՝*

[իշխանությանը»,](#) «[mediahub.am](#)» լրատվական կայք, 7 հոկտեմբերի, 2025թ.:

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը հրապարակային հայտարարությամբ հանդես գալու ընթացքում հնչեցրել է առերևույթ հայհոյանք պարունակող վիրավորական արտահայտություն:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ի պաշտոնե հանդես գալիս, ցանկացած իրավիճակում, ցուցաբերել բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն:

Հանձնաժողովն իրականացրել է Վ.Ղուկասյանի կիրառած արտահայտության իմաստաբանական վերլուծություն՝ դիտարկելով նաև նրա ամբողջական խոսքի բովանդակությունը: Հանձնաժողովն արձանագրել է, որ թեև Վ.Ղուկասյանի խոսքը վերաբերել է հանրային հետաքրքրություն ունեցող հարցերի, այնուամենայնիվ, անգամ քաղաքական բանավեճի շրջանակներում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից առերևույթ հայհոյախոսության կամ գռեհիկ և խիստ անպարկեշտ արտահայտության կիրառումը հանգեցնում է Կանոնագրքի 36-րդ կետի առերևույթ խախտման:

Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ ուսումնասիրության դեպքի քննարկման պահին Վ. Ղուկասյանի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում և որպես խափանման միջոց՝ նա կալանավորվել է և նրա լիազորությունները կասեցվել են, ուստի վերջինս ներկայում չի պաշտոնավարում որպես համայնքի ղեկավար՝ Հանձնաժողովը որոշել է դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

6. *[«Արգիշտի Մեխակյանի և ՔՊ-ի քարոզչական նյութերը՝ համայնքի սոցիալական էջերում»](#), «Hetq.am» լրատվական կայք, 22 հոկտեմբերի, 2025թ.:*

Հրապարակման համաձայն՝ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությանը նախորդող շրջանում Խոյ համայնքի մի շարք բնակավայրերի՝ «Ֆեյսբուք»

սոցիալական կայքի պաշտոնական էջերում կատարվել են քարոզչական բնույթի հրապարակումներ, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արգիշտի Մեխակյանը հրավիրվել և մասնակցել է Խոյ համայնքի պաշտոնական միջոցառումների։

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի 55-րդ կետի համատեքստում, համաձայն որի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների համար տրամադրված հանրային ռեսուրսները (այդ թվում՝ մարդկային ռեսուրսները, աշխատաժամանակը) օգտագործել բարեխղճորեն՝ բացառապես իր լիազորությունների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և հանրային ծառայողների աշխատաժամանակը սեփական շահերը բավարարելու կամ այլ մասնավոր նպատակներով։ Հրապարակումը դիտարկվել է նաև Կանոնագրքի 62-րդ կետին համապատասխանության համատեքստում, համաձայն որի՝ հանրային պաշտոն զբաղեցող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար։

Հանձնաժողովն արձանագրել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արգիշտի Մեխակյանի մասնակցությունը Խոյ համայնքում անցկացվող միջոցառումներին ապահովելը, նրան հրավիրելը այն դեպքում, երբ ոչ նախընտրական ժամանակահատվածում նույնական պրակտիկան չի կիրառվել, առերևույթ կարող է վկայել հանրային ռեսուրսների, այն է՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար նախատեսված տեղեկատվական ռեսուրսների («Ֆեյսբուք» սոցիալական ցանցում պաշտոնական էջի) և միջոցառումների

անցկացման համար նախատեսված նյութատեխնիկական ու մարդկային ռեսուրսների առերևույթ չարաշահման մասին։ Այնուամենայնիվ, Հանձնաժողովը նպատակահարմար չի համարել քննարկել՝ արդյոք նշված արարքները վերագրելի են Խոյ համայնքի նախկին ղեկավար Լյուդվիկ Յայլոյանին, քանի որ վերջինս այլևս չի հանդիսանում համայնքի ղեկավար և զբաղեցնում է միավորված Վաղարշապատ համայնքի ավագանու անդամի պաշտոնը, իսկ Հանձնաժողովն իրավասու չէ քննել ավագանու անդամների կողմից վարքագծի կանոնների ենթադրյալ խախտման դեպքերը։

Նմանապես, Հանձնաժողովը նաև լիազորված չէ քննարկել նախկին Խոյ համայնքի բնակավայրերի՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի պաշտոնական էջերում քարոզչական բնույթի հրապարակումների կատարման իրավաչափությունը, քանի որ Կանոնագիրքը կիրառելի չէ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարների նկատմամբ։

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ բացակայում են Հանձնաժողովի լիազորությունների շրջանակում ընդգրկված սուբյեկտների կողմից առերևույթ խախտման հատկանիշները։ Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է հրապարակման հիման վրա վարույթ չհարուցել։

7. *«Լոպազացել է, մտել բունը. ինչքան շուտ հելնես, էդքան քո բաժին չափալախը շուտ կստանաս. Խաչատրյանը՝ Աբրահամյանին», «Armtimes.am» լրատվական կայք, 17 հոկտեմբերի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր էջում կատարել է ենթադրյալ սպառնալիք պարունակող գրառում («Բնից դուրս արի (...) ինչքան շուտ հելնես՝ էտքան քո բաժին չափալախը շուտ կստանաս։»)։

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի համատեքստում, որի 48-րդ կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է սոցիալական մեդիայում իր աշխատավայր հանդիսացող կամ հանրային իշխանության այլ մարմնի գործունեությունը հեղինակազրկող մեկնաբանություններով հանդես չգալ։ Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է զերծ մնա սոցիալական մեդիայի օգտահաշիվներից այնպիսի գրառումներ, հավանումներ անելուց կամ վերաբերմունք արտահայտող այլ նշաններ

կիրառելուց, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը, կասկածի տակ առնել հանրային ծառայությունում իր լիազորությունների անաչառ և պատշաճ իրականացումը:

Հանձնաժողովը քննարկել է Վ.Խաչատրյանի կողմից կատարված արտահայտությունների և ամբողջ գրառման բովանդակությունը, ինչպես նաև մինչ նրա գրառումը Ազգային ժողովի պատգամավոր Տ.Աբրահամյանի վարքագիծը, որին հասցեագրվել էր Վ.Խաչատրյանի գրառումը: Հանձնաժողովը գտել է, որ իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից այնպիսի խոսքի գործածումը, որը կարող է ողջամտորեն ընկալվել որպես առերևույթ բռնության սպառնալիք, անգամ եթե նման խոսքը կատարվել է քաղաքական բանավեճի համատեքստում: Հանձնաժողովը կարևորել է այն հանգամանքը, որ Վ.Խաչատրյանը խնդրո առարկա արտահայտությունը («ինչքան շուտ հելնես՝ էտքան քո բաժին չափալախը շուտ կստանաս») կատարվել է գրավոր խոսքում, ուստի Վ.Խաչատրյանը հնարավորություն ուներ իր խոսքը վերաձևակերպելու այնպես, որ բացառվի դրա ողջամիտ ընկալումը՝ որպես բռնության սպառնալիք:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ գրառումը պարունակում է Կանոնագրքի 48-րդ կետի առերևույթ խախտում, և որոշել է նախաձեռնել վարույթ:

8. *«Հլը ցածր, խի՞ եք ոգևորվել.Դիլիջանի «արու» քաղաքապետի նյարդային պահվածքը»*, *«Mediahub.am» լրատվական կայք, 26 հոկտեմբերի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավարը, պատասխանելով լրագրողների հարցերին, վիրավորել է նրանց, ի թիվս այլնի, նշելով. «Ես էնքան բան եմ սովորել, որ ձեր նմաններին կարամ դաստիարակեմ էլ, սովորացնեմ էլ, եղա՞վ:»:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի 51-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների

ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Քննարկելով Դ.Սարգսյանի կատարած արտահայտությունների բովանդակությունը՝ առանձին, ինչպես նաև նրան տրված հարցերի և իր պատասխանների ամբողջական բովանդակությունն ու ձևը, այդ թվում՝ տոնայնությունը՝ Հանձնաժողովը գտել է, որ թեև Դ.Սարգսյանի խոսքը չի կարող համարվել անձնական բնույթի խիստ վիրավորանք, այն, այնուամենայնիվ, առերևույթ վիրավորական, հեգնական է, տոնայնությամբ առերևույթ համաչափ չէ լրագրողների խոսքին և չի պարունակում լրագրողների վարքագիծը քննադատող, նրանց գործողությունները գնահատող բովանդակություն: Հանձնաժողովը հատկապես խնդրահարույց է գտել Դ.Սարգսյանի խոսքի արտահայտման ձևը, այդ թվում՝ տոնայնությունը և ոչ վերբալ հաղորդակցման ձևը, որոնք, Հանձնաժողովի գնահատմամբ, առերևույթ ոչ հարգալիր են եղել:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է Դ.Սարգսյանի վարքագծում Կանոնագրքի 51-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշների առկայությունը և որոշել դեպքի առթիվ նախաձեռնել վարույթ:

9. *«ՏԵՍԱՆՅՈՒԹ. Հայհոյանք, վիրավորանք. ՔՊ-ի կանոնագիրքն ընդունվեց ու խախտվեց 2 շաբաթ անց»*, *«armlur.am» լրատվական կայք, 19 դեկտեմբերի, 2025 թ. և ««Հլը շալվարներդ իջացրեք, թլպատված շներ»... «Սիրուն ըլնեիր՝ կիջացնեի». Թալինի ՔՊ-ական քաղաքապետը՝ զոհվածի ծնողին (տեսանյութ)»*, *«Lurer.com» լրատվական կայք, 18 դեկտեմբերի, 2025թ.:*

Հրապարակումների համաձայն՝ ՀՀ Կոտայքի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը հավաքից առաջ վիրավորական կերպով է արձագանքել քաղաքացուն (քաղաքացու գոչյունին՝ հլը շալվարներդ իջցրեք, թլպատված շներ, պատասխանել է՝ նշելով՝ մի քիչ սիրուն լինեիր, կիջացնեի շալվարս), այնուհետև նույն օրը՝ հավաքի ընթացքում, հայհոյել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գտնվող անձանց:

Հանձնաժողովը հրապարակումներն ուսումնասիրել է Կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային անձանց պարտականությունները՝

ցուցաբերելու բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն, ինչպես նաև հարգելու վերադասի, անմիջական ղեկավարի (առկայության դեպքում), այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների, ինչպես նաև այլոց պատիվն ու արժանապատվությունը։

Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի՝ քաղաքացուն ուղղված խոսքերը կատարվել են՝ ի պատասխան նույն քաղաքացու հնչեցրած առերևույթ վիրավորական բնույթի և բարձրատոն խոսքին։ Այնուամենայնիվ, անգամ այդ հանգամանքի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի վարքագիծը պարունակում է Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերևույթ խախտման հատկանիշներ՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում իրավիճակը լարված չի եղել, քաղաքացու և Տ. Սափեյանի միջև տևական վիճաբանություն առկա չի եղել և նրա խոսքն ուղղված է եղել ոչ թե քաղաքական-հասարակական գործչի, այլ մասնավոր անձի՝ քաղաքացու։ Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի վարքագիծն առերևույթ կերպով չի համապատասխանել զսպվածություն դրսևորելու պահանջին։

Երկրորդ դրվագի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Սափեյանի կողմից գործածվել է հայհոյախոսություն։ Հանձնաժողովը գտել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից, անգամ ոչ ի պաշտոնե հանդես գալիս և լարված իրավիճակում, հայհոյանքի և վիրավորական արտահայտությունների կիրառումն ինքնին պարունակում է Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերևույթ խախտման հատկանիշներ։

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է նշված երկու դեպքերի առնչությամբ նախաձեռնել վարույթ։

10. *Մեր խնդիրը թողած՝ կաթողիկոսից էր խոսում. Թալինի համայնքապետը բնակիչների ընդունելությունը քարոզի է վերածել, «News.am» լրատվական կայք, 22 դեկտեմբերի, 2025 թ.:*

Հրապարակման համաձայն՝ Թալին համայնքի Արագածավան բնակավայրի բնակիչներից մեկի հայտնած տեղեկատվության համաձայն՝ Տ. Սափեյանի հետ հանդիպման ընթացքում, որի նպատակը եղել է քաղաքացու կողմից համայնքի ղեկավարին իր խնդիրների

ներկայացումը, Տ. Սափեյանը չի արձագանքել քաղաքացու խնդրին և փոխարենը վատաբանել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Կանոնագրքի 62-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցող անձը պարտավոր է ընտրությունների ժամանակ պահպանել նախընտրական քարոզչության, ներառյալ՝ քաղաքական գովազդին օրենքով ներկայացվող սահմանափակումները և պահանջները, ինչպես նաև՝ չօգտագործել հանրային ռեսուրսները, օրենքով նախատեսված վարչական ռեսուրսներն իր, այլ անձանց կամ քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի համար, չներգրավել այլ հանրային պաշտոն զբաղեցող անձանց, հանրային ծառայողների կամ այլ աշխատողների՝ օգտագործելու իրենց աշխատանքային ժամերը կամ այլ ռեսուրսները այդ նպատակի համար։

Հանձնաժողովը գտել է, որ ի պաշտոնե քաղաքացու ընդունելությունն իրականացնելու ընթացքում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից քաղաքական հարցերի շուրջ մեկնաբանություններ կատարելը այն դեպքում, երբ քննարկումը չի վերաբերել այդ թեմային և այդ առնչությամբ հարց չի հնչեցվել, հանգեցնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն տրամադրված հանրային ռեսուրսների, այդ թվում՝ պաշտոնեական դիրքի, որպես համայնքի ղեկավար՝ քաղաքացու ընդունելություն իրականացնելու իրավասության, աշխատաժամանակի չարաշահման։ Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ Տ. Սափեյանի վարքագիծը պարունակում է Կանոնագրքի 62-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշներ։

Այնուամենայնիվ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված դեպքում վարույթի հարուցումը նպատակահարմար չէ, քանի որ բացակայում են ենթադրյալ խախտումը հիմնավորող օբյեկտիվ ապացույցները։ Այսպես, ենթադրյալ խախտումը հավաստող միակ փաստական հանգամանքը լրատվամիջոցին քաղաքացու տված հարցազրույցն է, ուստի, տվյալ պարագայում Հանձնաժողովը զրկված է խախտման առկայությունը հիմնավորող բավարար ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունից։

Ըստ այդմ, Հանձնաժողովը որոշել է դեպքի առնչությամբ չհարուցել վարույթ։

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը

Հանձնաժողովը 2025 թվականի երկրորդ կիսամյակում շարունակել է ապահովել նվերների հաշվառման գործընթացը: Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հաշվառվել և հրապարակվել են նվերների հաշվառման ընդհանուր թվով 155 ձևաթղթեր (առաջին կիսամյակում հաշվառված և հրապարակված նվերների թիվը կազմել է 39), որոնցից 52 ձևաթուղթ ներկայացվել է Պետական արարողակարգի ծառայության կողմից, 103 ձևաթուղթ ներկայացվել է հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց կողմից: Հաշվառված նվերները հիմնականում ստացվել են ՀՀ վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, Արտաքին գործերի նախարարի և տեղակալի, Պաշտպանության նախարարի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի և տեղակալի, Էկոնոմիկայի նախարարի, ինչպես նաև Անվտանգության խորհրդի քարտուղարի, Դատախազության, Հակակոռուպցիոն կոմիտեի, Քննչական կոմիտեի, Քրեակատարողական ծառայության և Պաշտպանության նախարարության զինվորական ծառայության ծառայողների կողմից: Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով աջակցություն է տրամադրել նաև ստացված թվով 42 նվերի գնորոշման հարցում:



Հրապարակված ձևաթղթերին կարելի է ծանոթանալ Հանձնաժողովի կայքէջում՝ https://drive.google.com/drive/u/1/folders/1OnJ-NUHJpsMYEir9ICHgj1X4upTc6W71

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից հաշվետու ժամանակահատվածում 433 ծանուցումների (ռեեստրներ) հիման վրա ստացել և հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել 1,328 հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերել են 1,921 փոփոխությունների:

Վերը նշված փոփոխություններից 990-ը եղել են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 931-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6,196:

Հանձնաժողովի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 36 պաշտոնատար անձանց վերաբերյալ՝ նախորդ տարիների ընթացքում չներկայացված 38 տվյալ, որից՝ 24-ը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, իսկ 14-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին:

2.2 Աջակցություն հայտարարատուներին

2025 թվականի 2-րդ կիսամյակում Հանձնաժողովը հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրել հետևյալ գործիքներով

- Գործարկվել է Chatwoot[1] հարթակը, որի միջոցով հայտարարատուներին տրամադրվել է անհրաժեշտ օգնություն:
- contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ստացվել է շուրջ 200 հարցում,
- ստացված հեռախոսազանգերի թիվը կազմել է շուրջ 2000,
- Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով ստացվել է 31 գրավոր հարցում:

2.3 Հայտարարագրերի ներկայացման գործընթաց

2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողով է ներկայացվել 3,440 հայտարարագիր, որից 1,099-ը տարեկան հայտարարագրերն են, 1,195-ը՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 997-ը՝ պաշտոնեական պարտականություններն դադարեցնելու, իսկ 149-ը՝ 2017-2020 թվկականների տարեկան, պաշտոնեական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրեր, որոնք ներկայացվել են թղթային եղանակով:

[1] Chatwoot հարթակը գործարկվել է 30.10.2025 թվականից և հայտարարատուներին հնարավորություն է տալիս առցանց եղանակով իրենց հարցերը անմիջապես ուղղել Հանձնաժողովի աշխատակիցներին

2025 թվականի 2-րդ կիսամյակում Հանձնաժողովի ռեսուրսները մեծամասամբ ուղղվել են նախորդ ժամանակահատվածներում չներկայացված հայտարարագրերի ներկայացման գործընթացի ապահովմանը, մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում ապահովվել է 2021-2023 թթ. ժամանակահատվածում ներկայացման ենթակա 734 տարեկան հայտարարագրի, ինչպես նաև 2021-2024 թթ. ժամանակահատվածում ներկայացման ենթակա պաշտոնեական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու 325 հայտարարագրի ներկայացումը:

Պաշտոնատար անձանց և ընտանիքի անդամների կողմից տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները[2] 2023-2025թթ. ընթացքում ներկայացված են ստորև.



Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիր չներկայացրած անձանց վերաբերյալ Հանձնաժողովից ելքագրվել է ընդհանուր 1890 գրավոր ծանուցում: Պաշտոնատար անձանց ընտանիքի անդամները հայտարարագրերը ներկայացնելու պարտականության

[2] Քանակական ցուցանիշներն ամփոփված են 2026 թվականի տարեսկզբի դրությամբ

մասին զուգահեռ տեղեկացվել են նաև հեռախոսազանգերի միջոցով. իրականացվել է շուրջ 5,000 հեռախոսազանգ: Ելքագրված գրավոր ծանուցումների արդյունքում մեծամասամբ ներկայացվել են պահանջվող հայտարարագրերը մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ավարտը, ինչպիսի դեպքում Հանձնաժողովը կարճել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները՝ հայտարարելով բանավոր դիտողություն[3]:

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

2025 թվականի երկրորդ կիսամյակում ստացվել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 260 դիմում, որից 191-ը պաշտոնատար անձանց, իսկ 69-ը նրանց ընտանիքի անդամների կողմից: Ներկայացված 260 դիմումները վերաբերել են 691 հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն:

2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովն ապահովել է դիմումների ընթացքը, որի արդյունքում.

- 162 դիմումներ, որոնք վերաբերել են 404 հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն՝ բավարարվել են, փոփոխությունները կատարվել են, ստուգվել է դիմումով ներկայացված և փաստացի կատարված փոփոխությունների համապատասխանությունը և հրապարակվել,

- 1 դիմումով ներկայացված տվյալները հայտարարագրման ենթակա տվյալներ չհանդիսանալու պատճառով դիմումը վերադարձվել է դիմումատուին,

- 10 դիմումներ, որոնք վերաբերել են 18 հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն, մերժվել են փոփոխվող տվյալների՝

[3] Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատն ուղղված է առաջին հերթին կանխարգելելու իրավախախտումները, և ոչ թե կիրառել տույժեր: Այս համատեքստում Հանձնաժողովը վարչական տույժը դիտարկում է որպես ծայրահեղ միջոց և այն կիրառում է բացառիկ դեպքերում, երբ կանխարգելման մեխանիզմները չեն ապահովում օրենսդրի նպատակների իրագործումը: Նման մոտեցումը միտված է խթանել հայտարարատուների իրավագիտակցությունը և խուսափել պատժամիջոցների գերակշռող կիրառությունից, ինչը համահունչ է նաև Հանձնաժողովի լիազորությունների բուն էությանը:

Հանձնաժողովին այլ կերպ հայտնի դառնալու հիմնավորմամբ: Մասնավորապես, որոշ դեպքերում մամուլի մշտադիտարկումների արդյունքում կամ սեփական նախաձեռնությամբ փոփոխման ենթակա հայտարարագրերը գտնվել են Հանձնաժողովի ուսումնասիրության ներքո, իսկ որոշ դեպքերում դրանք հանդիսացել են քրեական վարույթի առարկա:

● 87 դիմումներ, որոնք վերաբերել են 268 հայտարարագրերում հայտարարագրված տվյալների փոփոխության՝ ստուգման փուլում են:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ստուգում

Հաշվետու ժամանակահատվածում ՁԼՄ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված հրապարակումներում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների հիման վրա նախաձեռնվել են 93 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ ուսումնասիրություն: Միաժամանակ, շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում նախաձեռնված ուսումնասիրությունները: Արդյունքում հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 80 հայտարարատուների վերաբերյալ ՁԼՄ հրապարակումների ուսումնասիրություն: Իրականացրվել է նաև անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման և բարեվարքության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված անհապատասխանությունների, առերևույթ սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալներին առնչվող փաստերի ստուգում, որոնցից 37-ն ավարտվել է հաշվետու ժամանակարջանում: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և ավարտվել է նաև կուսակցությունների հաշվետվությունների ստուգման արդյունքում 7 հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ուսումնասիրություն:

Արդյունքում, 2025 թվականի 2-րդ կիսամյակում ավարտվել են 124 հայտարարատուների 402 հայտարարագրերի համապատասխան տվյալների ստուգումներ, որոնցից՝

1. 117 դեպքով հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը: Ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ,
2. 3 դեպքով որոշվել է իրականացնել հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծություն (համալիր վերլուծություն),
3. 2 դեպքով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, արդյունքում՝ մի դեպքով կիրառվել է բանավոր դիտողություն, իսկ մյուսով՝ նախազգուշացում:
4. 1 դեպքով Հանձնաժողովը հաղորդում է ներկայացրել համապատասխան մարմին՝ հիմք ընդունելով այն փաստը, որ պաշտոնատար անձի կողմից նույն անձին օտարվել են գույքեր, որի օրինական եկամուտների և նրա կողմից ձեռքբերված գույքերի ընդհանուր արժեքների մեջ առկա են եղել էական շեղումներ: Բացի այդ, հաշվի առնելով գնորդի և պաշտոնատար անձի միջև առկա հնարավոր կապերը, ինչպես նաև օրինական եկամուտներով գույքերի ձեռքբերումների չհիմնավորելը՝ Հանձնաժողովը գտել է, որ օտարման գործարքների մեջ առկա են գործարքների օրինականության ռիսկեր:
5. Ընթացիկ մյուս ուսումնասիրությունների առնչությամբ հայտարարատուներից հայցվել են պարզաբանումներ կամ այլ

անձանց լրացուցիչ հարցումներ, որոնք դեռևս չեն ստացվել կամ գնահատման փուլում են :

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է 53 հայտարարատուների 190 հայտարարագրերի վերլուծություն, որից՝

1. 48 հայտարարատուների 166 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (այդ թվում՝ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված: Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատու անձանց առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում, ընդ որում՝

   1.1. 21 հայտարարատուների 55 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաև որոշ դեպքերով արձանագրված անհամապատասխանությունների՝ Հանձնաժողովի նախադեպային որոշումների համաձայն նվազ նշանակության իրավախախտում հանդիսանալու փաստը,

   1.2. 27 հայտարարատուների 111 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուներին առաջարկվել է համապատասխան հայտարարագրերում ուղղում կատարելու համար դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ հաշվի առնելով վարչական տույժ

նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելու հանգամանքը,

2. 3 հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծության արդյունքում հաղորդում է ներկայացվել Գլխավոր դատախազություն։

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից մեկը վերաբերել է Հանձնաժողովի կողմից սահմանված ռիսկային չափորոշիչների հիման վրա իրականացված վերլուծության ընթացքում նախկին դատավորի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում գույքային դրության վերաբերյալ տվյալների արժանահավատության և ամբողջականության առնչությամբ Հանձնաժողովի մոտ ձևավորված ողջամիտ կասկածներին՝ առ այն, որ անձի գույքի ավելացումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, ինչպես նաև տարեկան ծախսը կազմել էր բացասական մեծություն, ինչպիսի պայմաններում առկա էր կասկած չհայտարարագրված կամ սխալ հայտարարագրված տվյալների առնչությամբ: Այդ հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով։

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից երկրորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված խնդիրներին: Մասնավորապես, հայտարարատուի գույքի, ինչպես նաև բանկային հաշիվներով իրականացված գործարքների օրինականության, հայտարարագրերում առերևույթ չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալների, ինչպես նաև չբացահայտված եկամուտների աղբյուրների առկայության առնչությամբ ներկայացված պարզաբանումների արդյունքում Հանձնաժողովի կասկածները չեն փարատվել: Հանձնաժողովի՝ վերոնշյալ հաղորդման հիման

վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ։

Գլխավոր դատախազություն ներկայացված հաղորդումներից երրորդը վերաբերել է մամուլի հրապարակման հիման վրա համայնքի ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ ներկայացված պարզաբանումների արդյունքում Հանձնաժողովի կասկածների չփարատվելուն: Մասնավորապես, բանկային հաշիվների շարժերը համադրելի չեն եղել հայտարարագրված եկամուտների հետ, գույքերի փոփոխությունը չի հիմնավորվել հայտարարագրված դրամական միջոցներով և օրինական եկամուտներով: Բացի այդ, պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերում հայտարարագրված տվյալների հիման վրա հաշվարկված ընթացիկ տարեկան ծախսը կազմել է բացասական մեծություն: Միաժամանակ, տվյալ պաշտոնատար անձի միջոցով իրականացվել են համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի ձեռքբերման գործարքներ, թաքցվել են դրանց ձեռքբերման գումարների ծագման աղբյուրների և իրական շահառուների վերաբերյալ տվյալները: Մասնավորապես, տվյալ համայնքի ղեկավարի ընտանիքի դրամական միջոցների հաշվին ձեռք են բերվել վերոնշյալ գույքերը, որոնք հետագայում օտարվել են համայնքի ղեկավարի ընտանիքի անդամին: Հանձնաժողովի՝ վերոնշյալ հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ։

3. 2 պաշտոնատար անձի և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի վարլուծություն ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ նրանցից հայցված և ներկայացված (կամ չներկայացրած) պարզաբանումների գնահատման վերաբերյալ տվյալները փոխանցվել են Գլխավոր դատախազություն:
4. Իրականացված վերլուծությունների ընթացքում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների առնչությամբ որոշ

դեպքերով պաշտոնատար անձանց և ընտանիքի անդամների, ինչպես նաև հայտարարատուի՝ սեփականության իրավունքով գրանցված գույքից տարբերվող, նրա կողմից գույքի փաստացի տիրապետվող, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի՝ նրա անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերման կամ նրա կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալու կամ այդ գույքի տնօրինելու հանգամանքների առկայությունը ստուգելու վերաբերյալ տեղեկություններ են ուղարկվել համապատասխան մարմին՝ իրականացնելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ՝ հնարավոր հանցագործությունները հայտնաբերելու և կանխելու նպատակով:

5. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված վերլուծությունների ընթացքում երկու դեպքով Հանձնաժողովի որոշման հիման վրա կայացվել է իրավիճակային հայտարարագրեր ներկայացնելու պահանջի մասին որոշում:

3.3 Հայտարարագրերի ստուգման և վերլուծության արդյունքում իրականացված վարույթներ

Հաշվետու ժամանակաշրջանում հայտարարագրերի չներկայացման, ստուգման և վերլուծության արդյունքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված վարչական իրավախախտման վերաբերյալ 354 վարույթներից 43-ը եզրափակվել են 200,000 ՀՀ դրամի չափով վարչական տույժ կիրառելու մասին որոշումների ընդունմամբ, 1 վարույթ եզրափակվել է նախազգուշացում հայտարարելով, 278 դեպքով վարույթը եզրափակվել է բանավոր դիտողության, 33 վարույթ եզրափակվել է կարճման որոշումների ընդունմամբ՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու հիմքով իրականացվել է 1 վարույթ, որը եզրափակվել է

վարչական տույժի կիրառմամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու հիմքով իրականացվել է 1 վարույթ, որը եզրափակվել է կարճման որոշման ընդունմամբ:

Հայտարարագիր ներկայացնելու պահանջների պահպանվածության ստուգման գործառույթի շրջանակում պաշտոնատար անձի ընտանիքի կազմը բացահայտելու նպատակով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ իրականացնելու նպատակով 2 դիմում է ներկայացրել իրավասու մարմին, որոնցից մեկի մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

3.4 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

2025 թվականի մայիսի 29-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն է կատարվել, որոնք ուժի մեջ են մտել 2025 թվականի հուլիսի 4-ից: Սահմանվել է, որ կրիպտոակտիվների դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ կրիպտոակտիվի անվանումը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն (գործարքը կրիպտոակտիվների առևտրային հարթակում կնքված լինելու դեպքում՝ հարթակի օպերատորի անվանումը):

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից իրականացվել են ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքներ, մասնավորապես մշակվել են «ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն» և «ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 306-Ն» որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծերը՝ ապահովելու կրիպտոակտիվների վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալների ներառումը հայտարարագրի համապատասխան ձևանմուշներում:

Վերոնշյալից զատ, Հանձնաժողովը մշակել է «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչներ սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը: Նախագիծը սահմանում է հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների համակարգ, ներառյալ դրանց քանակական (միավորային) գնահատման մեթոդաբանությունը և ռիսկի ցուցանիշների նվազագույն շեմը, որի դեպքում հայտարարագիրը ենթակա է վերլուծության:

Ռիսկային չափորոշիչները ներառում են ինչպես ավտոմատ հաշվարկվող ցուցանիշներ (օր.՝ ընթացիկ տարեկան ծախսերի բացասական մեծություն, կանխիկ միջոցների առկայություն համադրված այլ հանգամանքների հետ և այլն), այնպես էլ լրացուցիչ ռիսկի գործոններ, որոնք կարող են յուրաքանչյուր դեպքում առանձին գնահատվել իրավասու ստորաբաժանման կողմից՝ հիմնվելով փաստական տվյալների և հայտարարատուի ընդհանուր գույքային դրության վրա:

Կարգավորումը նաև սահմանում է ռիսկային ցուցանիշների հիման վրա ամենամյա վերլուծության ենթակա հայտարարատուների և հայտարարագրերի ցանկի ձևավորման մեխանիզմը, ներառյալ ինքնաշխատ կերպով արտահանվող ցուցակների օգտագործումը:

Որոշման նախագիծն ուղարկվել է պետահիրավական փորձաքննության. նախատեսվում է ընդունել 2026 թվականի 1-ին կիսամյակում:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ամփոփված են 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված հիմնական աշխատանքները՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության ընթացիկ վերահսկողության ոլորտում: Մասնավորապես՝ ներկայացված են 2025 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված օրենսդրական նախաձեռնությունները և իրականացված փոփոխությունները, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքը, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների

ներկայացման գործընթացը, Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում իրականացված աշխատանքները և այլն:

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

2025 թվականի առաջին կիսամյակում սկսված օրենսդրական մի շարք նախաձեռնություններ շարունակվել են նաև երկրորդ կիսամյակում: Այդ գործընթացի շրջանակում Հանձնաժողովի մանդատից բխող գործառույթների իրականացման ընթացքում ծագած մի շարք խնդիրների, քաղհասարակության ներկայացուցիչների կողմից արձանագրված խնդիրների հաշվառմամբ ամփոփվել են բոլոր առաջարկները և դրանք ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարություն՝ համապատասխան նախագծերում ներառելու նպատակով: Մասնավորապես, Հանձնաժողովի առաջարկով կուսակցություններին նվիրատվություններ կատարած անձանցից իրավիճակային հայտարարագրեր պահաջելու, հաշվետվության ստուգման ժամանակ օպերատիվ հետախուզական տեղեկություններ ձեռք բերելու նպատակով իրավասու մարմիններին դիմելու լիազորությունների օրենսդրությամբ ամրագրման, կուսակցությունների կողմից կանխիկ դրամական միջոցների՝ խոշոր չափերով շրջանառության քրեականացման, ինչպես նաև մի շարք այլ կարգավորումներ ներառվել են «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերի փաթեթում:

Օրենսդրական փոփոխություններից բխող ենթաօրենսդրական ակտերի մշակման ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. 2025 թվականի հուլիսի 30-ին ընդունվել է ««Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2022 թվականի

հունիսի 17-ի N 02-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 03-Ն որոշումը։ Իրականացված փոփոխությունների և լրացումների արդյունքում պարզեցվել է աուդիտորական կազմակերպությունների ընտրության մրցութային գործընթացը, նվազեցվել է մի քանի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման համար միևնույն կազմակերպության կողմից հաղթող ճանաչվելու հավանականությունը՝ ապահովելով անցկացվող մրցույթի արդյունավետությունը, թափանցիկությունը, ինչպես նաև ավելի լայն մասնակցայնության հնարավորությունը։ Սույն որոշումը պաշտոնապես հրապարակվել է 2025 թվականի օգոստոսի 1-ին և ուժի մեջ մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

2. 2025 թվականի հոկտեմբերի 27-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»։ Իրականացված փոփոխությունների արդյունքում պարզեցվել և բարելավվել է կուսակցությունների տարեկան հաշվետվությունները Հանձնաժողով ներկայացնելու գործընթացը։ Փոփոխությունների արդյունքում սահմանվել են՝
   2.1. էլեկտրոնային համակարգի միջոցով կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ներկայացնելու ընթացակարգերը,
   2.2. հաշվետվությունն էլեկտրոնային համակարգով ներկայացնելու անհնարինության դեպքում թղթային եղանակով ներկայացնելու ընթացակարգը,
   2.3. տարեկան հաշվետվության ձևում ավելացվել են համապատասխան բաժիններ, ինչը հնարավորություն կստեղծի, որ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների «Մուտքեր Ելքեր» թերթում առկա «Այլ մուտքեր» և «Այլ ելքեր» տողերը լրացնելիս նաև ներկայացվեն դրանց առանձին բացվածքները,
   2.4. նվիրատուների դեպքում՝ կլրացվեն նաև նվիրատուների հայրանունները (առկայության դեպքում), որը կլինի հրապարակային տվյալ,

2.5. տարեկան հաշվետվության ձևից հանվել է հետազոտությունների մասին աղյուսակը,

2.6. բնեղենով նվիրատվությունների հաշվարկման արդյունավետությունից ելնելով՝ սահմանվել է, որ տարեկան հաշվետվությամբ կներկայացվեն անշարժ գույքը կուսակցությանը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու վերաբերյալ բոլոր տվյալները, այդ թվում՝ գույքի վարձակալության կամ օգտագործման մակերեսը և տևողությունը:

Որոշումը պաշտոնապես հրապարակվել է 2025 թվականի նոյեմբերի 6-ին և ուժի մեջ մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Մշակվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը, որը դրվել է հանրային քննարկման և ուղարկվել շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս չեն ստացվել ամբողջական առաջարկությունները: Ստուգման կարգի հաստատումը հնարավորություն կտա ապահովել Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների իրականացումը, բոլոր կուսակցությունների դեպքում կիրառելով նույն սկզբունքը, ինչպես նաև բարձրացնել կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ստուգման ամբողջականությունը և արժանահավատությունը: Այն նպատակ ունի ապահովել օրենքով սահմանված վերահսկողական լիազորությունների գործնական իրագործումը՝ հստակեցնելով ստուգման իրականացման հիմքերը, փուլերը, մեթոդները, տվյալների հավաքագրման և գնահատման կարգը:

4. Մշակվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որը շրջանառվել է և իրականացվում են ստացված կարծիքների ամփոփումները: Նախագծով առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն ապահովել ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2025

թվականի մայիսի 29-ին ընդունված ՀՕ-174-Ն օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2025 թվականի մայիսի 29-ի N 666-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների կիրարկումը համապատասխան հայտարարագրերի ձևանմուշների հաստատման միջոցով հնարարվորություն ստեղծել հայտարարատու պաշտոնատար անձի համար օրենքով պահանջվող տվյալները հայտարարագրելու և հայտարարագրելուց հետո դրանց հրապարակայնությունն ապահովելու համար:

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

4.2.1 Պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի համատեքստում Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում ավարտին է հասցրել պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումը: Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 23-ի «Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» որոշմամբ կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել էր 60 (վաթսուն) օրով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) սահմանված 30-օրյա ժամկետը բավարար չէր ստուգումն ավարտելու համար:

Սահմանադրական օրենքի համաձայն՝ *Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունել է որոշումներ, որոնց մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա*

ժամկետում, տեղեկացրել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը և կուսակցություններին:

2024 հաշվետու տարվա համար պետական ֆինանսավորումը կազմված է եղել երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում՝ 60 տոկոսը և պետական նպատակային ֆինանսավորում՝ 40 տոկոսը: Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների՝ 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում ընդունվել են պետական նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին համապատասխան որոշումներ՝ հիմք ընդունելով Սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 7-8-րդ մասերը: Այդ որոշումների համաձայն՝ պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններին տրամադրվել են նպատակային ֆինանսավորումներ, հետևյալ սահմանաչափերով՝

Կուսակցության անվանում	**Տրամադրվող նպատակային ֆինանսավորում**	**Տրամադրվող նպատակային ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)**
«Քաղաքացիական պայմանագիր»	կեսը	26,830,900
«Հայ յեղափոխական դաշնակցություն»	կեսը	16,322,100
«Վերածնվող Հայաստան»	կեսը	
«Բարգավաճ Հայաստան»	3/4	7,566,600
«Հանրապետություն»	ամբողջը	7,751,600

«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության 2024 թվականի տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում պարզվել է, որ կուսակցությանը պատկանող երեք անշարժ գույքեր հանձնվել են վարձակալության՝ 3,550,000 ՀՀ դրամով, ուստի պետական ֆինանսավորումը նվազեցվել է 3,550,000 ՀՀ դրամի չափով:

Այսպիով պետական ֆինանսավորում ստացող 5 կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների

ստուգմամբ ընդունվել են որոշումներ՝ նպատակային ֆինանսավորումը մասամբ կամ ամբողջությամբ տրամադրելու հիմքերի առկայության մասին, ինչպես նաև հայտնաբերված սխալ կամ ոչ ամբողջական տվյալները շտկելու նպատակով՝ կուսակցություններին տրամադրվել է ժամկետ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով. վարչական կամ քրեական իրավախախտման դեպքեր չեն հայտնաբերվել:

4.2.2 Պետական ֆինանսավորման ոչ ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

2025 թվականի հունվարի 1-ից հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գործարկվել է կուսակցությունների տարեկան հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու բաղադրիչը, ինչով պայմանավորված՝ նախաձեռնվել են նախորդ տարիներին կուսակցությունների կողմից հանձնված տարեկան հաշվետվությունների թվայնացման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մուտքագրումների ընթացքում ի հայտ են եկել մի շարք անհամապատասխանություններ և վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող դեպքեր, որոնց հիման վրա Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են առանձին կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումներ: Այս համատեքստում, ինչպես նաև մամուլից ստացված տեղեկությունների հիման վրա՝ ստուգվել են ևս 13 կուսակցությունների հաշվետվություններ.

- «Համահայկական ճակատ» կուսակցության 2024 թվականի,
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցության 2024 թվականի,
- «Ազգային օրակարգ» կուսակցության 2022-2024 թվականների,
- «Ռամկավար ազատական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Շանթ դաշինք ազգայնական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայաստանի Հանրապետական» կուսակցության 2023-2024 թվականների,

- «Գործարար» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Ապրելու երկիր» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հաղթանակ» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայրենիք» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Հայաստանի եվրոպական» կուսակցության 2023-2024 թվականների,
- «Ուժը հայրենյաց» կուսակցության 2023-2024 թվականների տարեկան հաշվետվությունները:

Այսպիսով ստուգման են ենթարկվել 18 կուսակցությունների ընդհանուր 30 տարեկան հաշվետվություններ:

Ստուգումների արդյունքում Օրենսգրքի 189.21-րդ հոդվածի համաձայն՝ *Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու* դեպքի առթիվ նախաձեռնվել է 2 վարույթ՝ «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությանը նվիրատվություն կատարած իրավաբանական անձանց տնօրեններ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի տնօրեն Գեղամ Գրիգորյանի և «Բիզնես Զեթ-Փիար» գովազդային հրատարակչություն ՍՊԸ-ի տնօրեն Վարդան Աստվածատրյանի նկատմամբ: Վերջիններիս նկատմամբ ընդունվել է վարչական տույժ կիրառելու վերաբերյալ որոշում կատարած նվիրատվությունների չափով՝ համապատասխանաբար 510,000 և 300,000 ՀՀ դրամի չափով:

Մյուս կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում կուսակցություններին ուղարկվել են գրություններ տարեկան հաշվետվություններում շտկումներ կատարելու և ըստ անհրաժեշտության՝ պարզաբանումներ տրամադրելու համար, որոնց գնահատման արդյունքում ըստ անհրաժեշտության կնախաձեռնվեն համապատասխան գործողություններ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

4.3 Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ներկայացման գործընթաց

2024 թվականի առաջին կիսամյակից նախաձեռնված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել էին կուսակցությունների կողմից 2024 թվականի տարեկան հաշվետվությունները Հանձնաժողով ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետների չպահպանման դեպքեր, որոնց առթիվ նախաձեռնվել էին վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքները շարունակվել են՝ ուղղված ինչպես հաշվետվությունների ներկայացման ընթացքի ապահովմանը, այնպես էլ չկատարած պարտականությունների դեպքում օրենքով նախատեսված միջոցների կիրառմանը:

2024 թվականի ընթացքում տարեկան հաշվետվություն ներկայացնելու պարտականություն են ունեցել 123 կուսակցություններ: 2025 թվականի 2-րդ կիսամյակի վերջի դրությամբ 119 կուսակցություններ ներկայացրել են իրենց 2024 թվականի տարեկան հաշվետվությունները, իսկ 4 կուսակցություններ («Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ» «Հայրենատէր» և «Ազգային համաձայնություն») Սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել իրենց 2024 թվականի տարեկան հաշվետվությունները:

2024 թվականի տարեկան հաշվետվությունները հաշվետու ժամանակահատվածում չներկայացրած կուսակցությունների նկատմամբ նախաձեռնվել են ՎԻՎ վարույթներ. առաջին անգամ չներկայացրած 10 կուսակցությունների՝

1. «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ»,
2. «Ազգային համաձայնություն»,
3. «Ազգային ժողովրդավարների դաշինք»,
4. «Միացյալ Քրիստոնյա Հայաստան»,
5. «Արժանապատիվ ապագա»,
6. «Հայազն»,
7. «Միավորում հանուն Հայաստանի»,
8. «Ազգի ձայն»,
9. «Հայրենատէր»,
10. «Հայք լիբերալ»

նկատմամբ նախաձեռնվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով, որոնցից «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Ազգային ժողովրդավարների դաշինք», «Արժանապատիվ ապագա» կուսակցությունների պարագայում ընդունվել են կարճման վերաբերյալ որոշումներ՝ խախտումը որակելով նվազ նշանակության՝ մինչև գործի քննությունը խախտումը վերացնելու և/կամ հաշվետու տարում կուսակցության ֆինանսական գործունեություն չծավալելու հանգամանքով պայմանավորված, իսկ մյուս 7 կուսակցությունների դեպքում՝ ընդունվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ՝ հաշվի առնելով որ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը խախտումը չի վերացվել։

Վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրականացվել է կրկնակի վարույթ 4 կուսակցության նկատմամբ՝

1. «Միավորում հանուն Հայաստանի»,
2. «Հայենատեր»,
3. «Ազգային համաձայնություն»,
4. «Ազգի ձայն»,

որոնցից առաջին 3-ի դեպքում ընդունվել են վարչական տույժ կիրառելու վերաբերյալ որոշումներ, իսկ «Ազգի ձայն» կուսակցության դեպքում ընդունվել է բանավոր դիտողություն հայտարարարելով վարչական իրավախախատման վարույթը կարճելու վերաբերյալ որոշում, քանի որ մինչև գործի քննության ավարտը պահանջվող հաշվետվությունը ներկայացվել է Հանձնաժողով։

4.4 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների և ղեկավար մարմնի անդամների հայտարարագրերի ներկայացման գործընթաց

Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամներից (այսուհետ՝ հայտարարատու անձինք) 345-ը սահմանված ժամկետում

Հանձնաժողով են ներկայացրել 2024 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրերը, 319-ը չեն ներկայացրել:

Հանձնաժողովի կողմից իրականացված մոնիթորինգի ընթացքում պարզ է դարձել, որ սահմանված ժամկետից հետո տարեկան հայատարարագիրը ներկայացվել է ևս 170 հայտարարատու անձանց կողմից, որի արդյունքում՝ Սահմանադրական օրենքով սահմանված կարգով կուսակցությունների կողմից Հանձնաժողով ներկայացված կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հիման վրա հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 664 հայտարարատու անձանցից 515-ը ներկայացրել են հայտարարագրերը, իսկ 149-ը՝ ոչ:

Սահմանադրական օրենքով սահմանված կարգով կուսակցությունների կողմից Հանձնաժողով ներկայացված կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 91 անձանցից 65-ը ներկայացրել են հայտարարագրերը, իսկ 26-ը՝ ոչ: Պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող 47 անձանցից հայտարարագիր ներկայացրել են 19-ը, իսկ 28-ը՝ ոչ:

Վերը նշվածով պայմանավորված՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը օրենքով սահմանված ժամկետում չկատարած հայտարարատուները ծանուցվել են այդ մասին: Ծանուցման արդյունքում 86 հայտարարատուներ ներկայացրել են 166 հայտարարագրեր, իսկ պատշաճ ծանուցված համարվելուց հետո 30-օրյա ժամկետում հայտարարագրերը չներկայացնելու հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի հիմքով կազմվել են 20 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:

Կուսակցությունների ղեկավար կազմի կողմից հայտարարագրերը էլեկտրոնային համակարգով ներկայացնելու գործընթացը պատշաճ

կազմակերպելու նպատակով՝ Հանձնաժողովի կողմից 44 կուսակցություն ծանուցվել է Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում սահմանված պարտավորության կատարման մասին, ըստ որի՝ *Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը։*

Կուսակցություններից 35-ը պատշաճ ծանուցվել են, որոնցից 28-ը ծանուցմամբ նշված ժամկետում Հանձնաժողով են ներկայացրել անհրաժեշտ տեղեկությունները, իսկ 7 կուսակցությունների պաշտոնատար անձինք պատշաճ ծանուցված լինելով հանդերձ, սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան տեղեկությունները, որոնց նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ։ Վերոնշյալ 7 կուսակցություններից՝ «Հայկական երազանք» և «Ամբերդ» կուսակցությունները պահանջվող տեղեկատվությունը մինչև գործի քննության ավարտը ներկայացրել են, ինչպիսի հիմքով այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ հայտարարվել է բանավոր դիտողություն, և ընդունվել են վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթը կարճելու մասին որոշումներ, իսկ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Հայկական վերածնունդ», «Ինքնիշխան Հայաստան», «Հայաստանի սոցիալական արդարություն» կուսակցությունների պարագայում՝ որոշում է կայացվել վարչական տույժ կիրառելու մասին, «Նոր Վանաձոր» կուսակցության դեպքում որոշում չի ընդունվել՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների[4] հարաբերակցությամբ։

Չծանուցված կուսակցություններից 7-ի դեպքում՝ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում չի ստացել ուղարկված գրավոր ծանուցումը ստացած լինելու մասին հավաստումը, իսկ 2 կուսակցությունների

[4] Կուսակցության կողմից տրամադրվել է քաղվածք լուծարման գործընթաց սկսելու մասին, իսկ ղեկավար կազմի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են միայն կուսակցության նախագահի մասով՝ չնայած մինչև լուծարման գործընթացի ավարտը հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը շարունակում է պահպանվել։

դեպքում՝ ծանուցումը վերադարձվել է, ուստի համապատասխան ընթացակարգով ծանուցումները տեղադրվել են ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքէջում, ինչպես նաև ուղարկվել են համայնքների ղեկավարներին՝ առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի դրույթներով: Իրականացված գործողությունների արդյունքում «Համահայկական ճակատ» և «Ժողովրդավարություն և աշխատանք» կուսակցություններից ստացվել են պահանջվող տեղեկությունները, մինչդեռ մյուս 7 կուսակցությունների դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ ծանուցումը azdarar.am կայքում տեղադրելուն հաջորդող 5-րդ օրը, օրենքի ուժով համարվել է հանձնված (ստացված), ուստի ծանուցված համարվելուց հետո՝ 5-րդ աշխատանքային օրը, կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ և նախապատրաստվել են նյութեր գործերի քննության համար: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում Օրենսգրքի 189.10-րդ հոդվածով հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների քանակը կազմել է 14, որոնցից 9-ի՝ «Ազգի ձայն», «Քրիստոնյա-Ժողովրդական վերածնունդ», «Հայկական վերածնունդ», «Ինքնիշխան Հայաստան», «Հայաստանի սոցիալական արդարություն», «Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ», «Համախմբում», «Միասնական հայրենիք» կուսակցությունների նկատմամբ կայացվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ, իսկ «Արժանապատիվ ապագա», «Հայկական երազանք» և «Ամբերդ» կուսակցությունների՝ պարագայում ընդունվել են վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթները կարճելու մասին որոշումներ, իսկ 2-ի՝ «Նոր Վանաձոր» և «Ժողովրդավարական ուղի» կուսակցությունների պարագայում որոշում առկա չէ՝ պայմանավորված Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցությամբ:

4.5 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում

Համաձայն «ՀՀ Ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասի՝ *«Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում»: Այս գործառույթի համատեքստում Հանձնաժողովը Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ապահովվել է կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակում՝ 3-օրյա ռեժիմով:*

Հանձնաժողովի կողմից Վաղարշապատի ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում հրապարակվել է 8 տեղեկանք, որոնցից յուրաքանչյուրը ներառել է տեղեկություններ ընտրություններին մասնակցող 9 կուսակցությունների («Մայր Հայաստան ազգային-դեմոկրատական», «Հայրենիք», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր», «Առաջ աջակենտրոն», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Ազատ

դեմոկրատներ», «Ժառանգություն», «Համահայկական ճակատ») բանկային հաշիվների վերաբերյալ:

ՀՀ առևտրային բանկերից ստացված տեղեկությունների հիման վրա՝ հրապարակվել են կուսակցությունների մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները, դրանց տեսակը, յուրաքանչյուր գործարքի գումարի չափը (ՀՀ դրամով), համապատասխան գործարքի նկարագրությունը, ինչպես նաև բանկային հաշվի մնացորդը՝ տեղեկանքը հրապարկելու ամսաթվի դրությամբ:

V.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը **2025** թվականի **2**-րդ կիսամյակի ընթացքում պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով **248** անձանց բարեվարքության ուսումնասիրություն և թվով **85** անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել ընդհանուր թվով **333** խորհրդատվական բնույթի եզրակացություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ներկայացված թվով **333** եզրակացություններից **289**-ը եղել են դրական, **33**-ը՝ բացասական: Թվով **11** անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:



Ներկայացված եզրակացություններից՝

- 38-ը՝ **դատավորների թեկնածուների հավակնորդներին**,
- 55-ը՝ **դատախազների թեկնածությունների ցուցակում** ընդգրկվել հավակնող անձանց,
- 17-ը՝ **դատախազների առաջխաղացման ցուցակում** ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 7-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **օպերատիվ-հետախուզական** գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 21-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի **ինքնավար պաշտոնները** համալրել հավակնող անձանց,
- 40-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, առաջխաղացման** ենթակա անձանց,
- 70-ը՝ **Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների** ցուցակում ընդգրկել հավակնող անձանց
- 20-ը՝ **ընթացիկ ուսումնասիրություն** անցնելու պարտավորություն ունեցող **դատավորներին**

● 26-ը՝ **ընթացիկ ուսումնասիրություն** անցնելու պարտավորություն ունեցող **դատախազներին**

● 39-ը՝ **ընթացիկ ուսումնասիրություն** անցնելու պարտավորություն ունեցող **քննիչներին**



Բարեվարքության եզրակացությունների հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ թվային տվյալները ներկայացված են հաշվետվություն ներկայացնելու օրվա դրությամբ համապատասխան իրավասու մարմնի կողմից ստացված տեղեկատվության համաձայն:

Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 38 եզրակացություններից 32-ը եղել են դրական, 4-ը՝ բացասական, թվով 2 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Նշանակումների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:



Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 55 եզրակացություններից 49-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել և պաշտոնում նշանակվել են թվով 21 թեկնածու, թվով 49 թեկնածուի քննությունը նշանակված է 2026 թվականի հունվար ամսին, թվով 3-ը՝ բացասական, որից թվով 1-ը ընդգրկվել է ցուցակում: Թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, թեկնածուների քննությունը նշանակված է 2026 թվականի հունվար ամսին:





Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 17 եզրակացություններից 15-ը եղել են դրական, թեկնածուները ընդգրկվել են առաջխաղացման ցուցակներում, այնուհետև նշանակվել են համապատասխան պաշտոններում, 2-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել և նշանակվել է պաշտոնում թվով 1 թեկնածու:



Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 21 եզրակացություններից 20-ը եղել են դրական, որից թվով 18-ը նշանակվել են պաշտոնում: Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի

անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Թեկնածուն նշանակվել է պաշտոնում:





Հակակոռուպցիոն



պցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **7** եզրակացություններից **6**-ը եղել են դրական, որից թվով 4-ը նշանակվել է պաշտոնում, **1**-ը՝ բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում։

Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **70** եզրակացություններից **60**-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 45-ը, թվով 20 թեկնածու նշանակվել է պաշտոնում, **10**-ը՝ բացասական, որից ցուցակում ընդգրկվել են 6-ը, այնուհետև թվով 3 թեկնածու նշանակվել է պաշտոնում։





Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների և Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուի վերաբերյալ կազմված բարեվարքության թվով **40** եզրակացություններից **36**-ը եղել են դրական, որից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել և պաշտոնում նշանակվել է թվով 18 թեկնածու, թվով 15 թեկնածուի քննությունը նշանակված է 2026 թվականի հունվար ամսին, թվով **4**-ը՝ բացասական եզրակացություն, որոնք **ուսումնասիրվում են Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում:**



5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ



2025 թվականի 2-րդ կիսամյակում Հանձնաժողովն իրականացրել է ընդհանուր թվով **85** անձի բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն: Ներկայացված **85** եզրակացություններից՝ **71**-ը եղել են դրական, **9**-ը՝ բացասական: Թվով **5** անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել

տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված։

Քննչական կոմիտե ներկայացված թվով **39** եզրակացություններից **33**-ը եղել են դրական, **4**-ը բացասական, թվով 3 անձանց վերաբերյալ եզրակացություններում նշված հանգամանքները պարզաբանվել են, նախնական ուսումնասիրությունը դադարեցվել է՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառով, 1-ը **ուսումնասիրվում է Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում:** Թվով **2** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված։

Դատական դեպարտամենտ ներկայացված թվով **20** եզրակացություններից **13**-ը եղել են դրական, **4**-ը բացասական, թվով 1 բացասական եզրակացությունը ուղարկվել է դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով։ Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառով։ Թվով 3 դատավորի նկատմամբ Հանձնաժողովը որոշել է կարգապահական վարույթ չհարուցել, որոնցից թվով 1 դատավորի դեպքում վերջինիս կողմից վարքագծի կանոնների խախտման բացակայության պատճառով, թվով 2-ի դեպքում՝ հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների համար վերջիններիս նկատմամբ Հանձնաժողովի կողմից արդեն իսկ կարգապահական վարույթ արձանագրված լինելու հիմքով։ Թվով **3** թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված։

Գլխավոր դատախազություն ներկայացված թվով **26** եզրակացություններից **25**-ը եղել են դրական, **1-**ը բացասական։ Հանձնաժողովի կողմից տրված բացասական եզրակացության հիման վրա իրականացված ծառայողական քննությունը և դրա արդյունքների վերաբերյալ տվյալները դեռևս ամփոփված չեն։

Հանձնաժողովը 2025 թվականին 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված բարեվարքության ուսումնասիրության արդյունքներով գույքային դրության առնչությամբ ձևավորված հիմնավոր կասկածի հիման վրա, Գլխավոր դատախազություն է ներկայացրել թվով **1** հաղորդում՝ գույքի ավելացման և կատարված ծախսերի՝ օրինական եկամուտներով հիմնավորվելու, ինչպես նաև Թեկնածուի կողմից կատարված գործարքների օրինականության առնչությամբ:

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իր լիազորությունների շրջանակներում շարունակել է վարույթների իրականացումը: Հանձնաժողովի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել են թվով **399** վարույթներ, որոնցից՝

ՎԻՎ օրենսգրքով նախատեսված՝ **385** վարչական իրավախախատման վերաբերյալ վարույթ.

- Հայտարարագիր չներկայացնելու հիմքով՝ **354** վարույթ,
- Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու հիմքով՝ **7** վարույթ,
- Կուսակցությունների հաշվետվությունները չներկայացնելու հիմքով՝ **14** վարույթ,
- Կուսակցությունների կողմից պաշտոնատար անձանց ռեեստրը չներակայացնելու հիմքով՝ **3** վարույթ,
- Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու իրավախախտման հիման վրա՝ **1** վարույթ,
- Հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու հիման վրա՝ **1** վարույթ,

✔ Իրավաբանական անձի անունից կուսակցությանը նվիրատվություն կատարելու իրավախախտման հիման վրա՝ **2** վարույթ,

✔ **Նվիրատուի կողմից կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված առավելագույն չափը գերազանցելու իրավախախտման հիման վրա՝ 1 վարույթ,**

✔ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվություններն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու **իրավախախտման հիման վրա՝ 2 վարույթներ,**

✔ Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով՝ **7** վարույթներ,

✔ Վարքագծի կանոնների առերևույթ խախտումների հիման վրա՝ **4** վարույթներ,

✔ Առերևույթ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ՝ **2** վարույթ,

✔ Այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ՝ **1** վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթներից 61-ը եզրափակվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշման ընդունմամբ, իսկ մյուսները՝ բանավոր դիտողություն հայտարարելով և կարճելով վարչական վարույթը: Վարույթներից մի մասը դեռ գտնվում են ընթացիկ փուլում: Հարկ է նշել, որ իրականացված վարույթների արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կիրառվել է ընդհանուր առմամբ **12,960,000.00** ՀՀ դրամի չափով վարչական տույժ: Հաշվետու ժամանակատավածում պետությանը հատուցվել է ընդհանուր առմամբ՝ 8,246,695.00 ՀՀ դրամ:

2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և եզրակացությունների վերաբերյալ ՀՀ վարչական դատարան է ներկայացվել թվով 16 հայցադիմում, որոնցից 3-ը վերադարձվել են, իսկ 13-ը գտնվում են ընթացիկ քննության փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ նպատակ ունենալով ձևավորել պետական և համայնքային մարմիններում ու կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման կայուն և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել դրանց կիրառելիությունն ու շարունակական զարգացումը։

2025 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է ««Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում հետևյալ մարմիններում և կազմակերպություններում՝

1. հանրային իշխանության մարմիններում,
2. առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման ոլորտներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում,
3. պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում,
4. հիսուն տոկոս և ավելի պետական և/կամ համայնքային մասնակցություն ունեցող առևտրային կազմակերպություններում։

Նախագծի ընդունման պարագայում կոռուպցիոն ռիսկերի գնահատման նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի կսահմանի գնահատման ենթակա գործընթացները՝ հիմնվելով մեթոդաբանությամբ սահմանված ռիսկայնության չափորոշիչների վրա։ Նման մոտեցումը հնարավորություն կտա ռեսուրսները կենտրոնացնել այն գործընթացների վրա, որոնք օբյեկտիվորեն առավել խոցելի են կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ, և ապահովել դրանց խորքային և փաստահեն վերլուծություն։

Գնահատման շրջանակում Հանձնաժողովը առաջնահերթություն կտա կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ այդ թվում վարչարարության պարզեցմանը, հայեցողական որոշումների շրջանակի սահմանափակմանը, թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը, բարեվարքության մշակույթի ամրապնդմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման այլ համակարգային գործոնների զարգացմանը: Գնահատման արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը իրավասու կլինի գնահատման գործընթացին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել և ստանալ համապատասխան մարմիններից և կազմակերպություններից:

2025 թվականին Հանձնաժողովը պիլոտային ձևաչափով սկսել է կոռուպցիոն ռիսկերի գնահատումներ իրականացնել հինգ խոշոր պետական մասնակցությամբ ընկերություններում՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ում, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում և «Ջրառ» ՓԲԸ-ում: Պիլոտային գնահատումները նպատակաուղղված են կիրառվող մեթոդաբանության և գործիքակազմի փորձարկմանը, ինչպես նաև նշված կազմակերպությունների գործարար բարեվարքության համակարգերի ամրապնդմանն ու այդ համակարգերում առկա կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը:

Գնահատման ընթացքում առանձնացվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. Կառավարման արդյունավետություն և բարեվարքության մշակույթ,
2. հակակոռուպցիոն քաղաքականություններ և վարքականոններ,
3. հաշվետվողականություն և թափանցիկություն,
4. ազդարարման համակարգեր և ազդարարների պաշտպանություն,
5. ուսուցում, իրազեկում և շարունակական բարելավում:

Նշված ուղղությունների համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա Հանձնաժողովին գնահատել կարգավորող իրավական ակտերում առկա բացերը, թերի կամ ոչ հստակ

կարգավորումները, հայեցողական լիազորությունների ծավալն ու դրանց կիրառման վերահսկելիությունը, կառավարման և վերահսկողական մարմինների ձևավորման ընթացակարգերի թափանցիկությունն ու հիմնավորվածությունը, այդ մարմինների գործունեության արդյունավետությունն ու հաշվետվողականության մակարդակը, որոշումների ընդունման գործընթացների թափանցիկությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև ներքին վերահսկողության, ռիսկերի կառավարման և թվայնացման գործընթացների ներդրման և գործնական կիրառման աստիճանը։

Կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման նախաձեռնությունը բխում է ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված 2023–2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունից, որի «Գործարար ոլորտում բարեվարքության ամրապնդում» ռազմավարական ուղղությամբ նախատեսվում է պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրում և զարգացում։ Միաժամանակ նախաձեռնությունը պայմանավորված է նաև ՀՀ միջազգային պարտավորություններով։ Մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ գնահատման զեկույցում ընդգծվել է պետական մասնակցությամբ խոշոր ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման իրականացման, ինչպես նաև տնօրենների խորհուրդների դերի և պատասխանատվության հստակեցման անհրաժեշտությունը։

Կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատումների արդյունքների ամփոփումը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին։

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է մի շարք կրթական և իրազեկման ծրագրեր՝ կազմակերպված տարբեր թիրախային խմբերի համար, մասնակցել տարբեր իրազեկման հանդիպումներին: Այսպես.

Հանձնաժողովի անդամները հոկտեմբերի 17-ին մասնակցել են ՀՀ վարչապետի գլխավորությամբ տեղի ունեցած բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված քննարկմանը: Մասնավորապես, քննարկման առարկա են դարձել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները, նվերներ ընդունելու սահմանափակումները, անհամատեղելիության պահանջները, շահերի բախումը և այլ սահմանափակումներ՝ պայմանավորված պաշտոնեական պարտականությունների կատարմամբ:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով Հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 21-ին գործարկել է էլեկտրոնային ուսուցման հարթակ (այսուհետ՝ Ուսուցման հարթակ): Հարթակը ծառայում է որպես Հանձնաժողովի կրթական գործառույթի ապահովման գործիք՝ տրամադրելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կրթական մոդուլների, թվային գրադարանի, կրթական ինտերակտիվ լուծումների հասանելիություն: 2025 թվականի ընթացքում Հարթակում հասանելի են եղել 5 դասընթացներ: Դասընթացների ավարտին հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները ստացել են մասնակցությունը հավաստող վկայագրեր: Թեև հարթակը՝ համապատասխան դասընթացներով, գործարկվել է 2025 թվականի առաջին կիսամյակում, հաշվետու՝ երկրորդ կիսամյակում ապահովվել են հանրային և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց շարունակական առցանց վերապատրաստումները, իսկ հարթակի օգտատերերի թիվը նախորդ կիսամյակի համեմատ աճել է 40 անգամ:



Ուսուցման հարթակում 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ գրանցվել է 9578 անձ, այդ թվում՝ նախարարի տեղակալի պաշտոն զբաղեցնող 12 անձ, նախարարի 5 խորհրդական, 4 մարզպետ, համայնքի 2 ղեկավար, մարզպետի 11 խորհրդական, 27 գլխավոր քարտուղար, բարեվարքության հարցերով 29 կազմակերպիչ, 4 դատավոր, 3 քննիչ, 2 դատախազ:

2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հարթակում հասանելի 5 թեմատիկ դասընթացներին գրանցվել են հետևյալ արդյունքները՝

- «Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար» դասընթաց՝ 6087 գրանցված մասնակից, 5137-ը հաջողությամբ ավարտել է:
- «Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր» դասընթաց՝ 3830 գրանցված մասնակից, 3169-ը հաջողությամբ ավարտել է:
- «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» 2627 գրանցված մասնակից, 1885-ը հաջողությամբ ավարտել է:
- «Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները» դասընթաց՝ 2712 գրանցված մասնակից, 2115-ը հաջողությամբ ավարտել է:
- «Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում» դասընթաց՝ 2251 գրանցված մասնակից, 1704-ը հաջողությամբ ավարտել է:

2025 թվականի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 4-ը Հանձնաժողովը Ուսուցման հարթակում անցկացրել է «Բարեվարքության ճանապարհով» խորագրով առցանց վիկտորինա, որին մասնակցել է 1191 անձ: Վիկտորինան նախատեսված էր ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար: Լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները Հանձնաժողովի կողմից արժանացել են հանրային ճանաչման և խրախուսման՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան՝ դեկտեմբերի 9-ին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ: Իսկ բոլոր այն մասնակիցները, ովքեր հաղթահարել են վիկտորինայի անցողիկ շեմը՝ 80 տոկոսը, ստացել են մասնակցության հավաստագրեր:

Հարթակ հնարավոր է մուտք գործել՝ սեղմելով Հանձնաժողովի կայքում զետեղված «Հակակոռուպցիոն կրթություն» կոճակը: Էլեկտրոնային ուսուցման հարթակը գործում է հետևյալ հղումով՝ https://elearning.cpcarmenia.am/:



Հանձնաժողովը մեծապես կարևորում է կոռուպցիայի կանխարգելման գործընթացներում հատկապես երիտասարդության հակակոռուպցիոն կարողությունների զարգացումն ու ակտիվ ներգրավումը, ինչպես նաև հասարակության շրջանում կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականության ձևավորումն ու ամրապնդումը:

Ինչպես հասարակության բոլոր շերտերը, երիտասարդները նույնպես ենթարկվում են սոցիալական ռիսկերի, ինչպես, օրինակ, կոռուպցիան: Շատ կարևոր է, որ երիտասարդ սերունդը սովորի բացահայտել «կոռուպցիա» երևույթը և այն կանխելու գործիքները՝ սկսած իր առօրյայից: Այդ իսկ պատճառով, Հանձնաժողովն իր գաղափարներն ու ռեսուրսները մշտապես ուղղում է նաև սովորողների համար համապատասխան միջավայր ապահովող շրջանակների զարգացմանը:

Այս համատեքստում՝

«Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով հանդիպումների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովում իրականացվել են թվով 6 միջոցառումներ՝ **Երևանի 18 և մարզերի 18 ավագ դպրոցների հետ: Հանդիպումներին մասնակցել են 146 մանկավարժներ և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողներ**: Հանդիպումների ընթացքում մասնակիցները ծանոթացել են կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգին, Հանձնաժողովի գործառույթներին և լիազորությունների շրջանակին:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրեր՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ այցելելով, վերջիններիս համար ճանաչողական այցեր կազմակերպելով Հանձնաժողով, ինչպես նաև, տարբեր ՔՀԿ ներկայացուցիչների հետ համագործակցության շրջանակներում՝ վերջիններիս առաջարկությամբ:

Մասնավորապես.

- **Հոկտեմբերի 3-ին ճանաչողական այցով Հանձնաժողով են այցելել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի վարժարանի, Նոյեմբերի 12-ին՝ «Հայ ասպետ»** կրթադաստիարակչական բարեգործական հիմնադրամ հանրակրթական դպրոցի սովորողները:

- **Նոյեմբերի 5-ին՝ Երևանի թիվ 190 ավագ դպրոցի 11-րդ դասարանի**, իսկ **նոյեմբերի 28-ին՝ Ստ. Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները՝** հասարակագիտություն առարկայի շրջանակներում կոռուպցիայի վերաբերյալ նախագծային աշխատանքների համար լրացուցիչ գիտելիքներ և տեղեկություններ ստանալու նպատակով:

- **Դեկտեմբերի 5-ին՝ Կոտայքի մարզի Զորավան համայնքի «Զորավանի միջնակարգ դպրոց»-ի, իսկ դեկտեմբերի 19-ին՝ Հրազդանի ավագ դպրոցի հակակոռուպցիոն ակումբների 10-11-րդ դասարանի աշակերտները**:

- **Սեպտեմբերի 23-ին ճանաչողական այցով Հանձնաժողով են այցելել Հայաստանի եվրոպական համալսարանի**, իսկ **դեկտեմբերի 2-ին, 3-ին և 4-ին**՝ Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ, «**Բաց դռների օրվա**» շրջանակներում՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի և Պետական կառավարման ակադեմիայի ուսանողները**: Հանձնաժողովի անդամներն ուսանողներին են ներկայացրել կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմները, Հանձնաժողովի գործառույթներն ու լիազորությունների շրջանակը:

- **Դեկտեմբերի 1-ին և 3-ին կազմակերպվել են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից վերապատրաստված, Արմավիրի, Արարատի մարզերի և Երևան քաղաքի մի շարք դպրոցների հասարակագիտության ուսուցիչների այցելություններ Հանձնաժողով**: Հանդիպումներին մասնակցել են շուրջ 38 հասարակագիտության ուսուցիչներ:



Հաշվետու ժամանակաշրջանում, հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում, Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են.

1. «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» թեմայով երկօրյա վերապատրաստումներ ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների հետ՝

-2025թ. **հոկտեմբերի 30-31-ին Գյումրի քաղաքում, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) հետ համագործակցությամբ՝ Շիրակի մարզի 14 ՄԿՈՒ հաստատությունների 26 դասախոսների հետ**:

-2025 թվականի **նոյեմբերի 25-26-ին Երևան քաղաքում՝ Երևանի և մարզերի 23 ՄԿՈՒ հաստատությունների 23 դասախոսների հետ**:

Վերը նշված հանդիպումների նպատակն էր դասախոսներին ծանոթացնել Հանձնաժողովի կողմից մշակված, «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» ձեռնարկի կառուցվածքին, թեմաներին, առաջարկվող գործիքներին և մեթոդներին, ինչպես նաև գիտելիքների ամփոփման նպատակով նախատեսվող մասնակցային, իրավիճակային և դերային խաղերի անցկացման մեթոդներին:

2. 2025 թվականի **սեպտեմբերի 25-ին, 26-ին և 30-ին, ՀՀ 5 ԲՈՒՀ-երի շուրջ 37 դասախոսների հետ իրականացվել են Հանձնաժողովի կողմից մշակված, «Կոռուպցիան և համընդհանուր գործողությունները» վերտառությամբ, մոդուլի և մեթոդական ուղեցույցի շուրջ քննարկումներ**, նպատակ ունենալով դասախոսներին ներկայացնել մոդուլի նախագիծը՝ վերջիններիս կարծիքը հավաքագրելու, գնահատելու և հետագայում այն կրթական ծրագրերում ինտեգրելու նպատակով:

Հաշվի առնելով ՔՀԿ և ՁԼՄ ներկայացուցիչների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ վերջիններիս շրջանում ևս իրականացվել են շարունակական վերապատրաստումներ և իրազեկման հանդիպումներ, մասնավորապես.

Սեպտեմբերի 11-ին թվով 18 ՔՀԿ, սեպտեմբերի 15-ին թվով 46 երիտասարդ լրագրողների և դեկտեմբերի 15-ին թվով 20 ՔՀԿ և ՁԼՄ ներկայացուցիչների հետ իրականացվել են «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով հանդիպումներ:

Միջոցառումների նպատակն էր մասնակիցներին ծանոթացնելու կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմերին, ստեղծելու արդյունավետ համագործակցություն՝ կանխարգելման մեխանիզմների

կիրառման, կատարելագործման և հանրային վերահսկողության գործընթացներում:

Այսպիսով, 2025 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված հանդիպումներին և միջոցառումներին մասնակցություն են ունեցել Երևան քաղաքի և մարզերի 39 դպրոցների 89 մանկավարժներ և 57 ծնողներ, բուհերի, ՄԿՈՒ հաստատությունների և դպրոցների 180 ուսանողներ և աշակերտներ, բուհերի և ՄԿՈՒ հաստատությունների 86 դասախոսներ, ինչպես նաև հանրային ծառայողներ, որոնցից ավելի քան 9,000-ը՝ էլեկտրոնային ուսուցման (E-learning) հարթակով վերապատրաստում անցածները: Վերապատրաստման դասընթացների արդյունքում ստացել են ավելի քան 14,000 հավաստագրեր՝ մասնակցելով մեկ կամ մի քանի դասընթացների:

8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրեր, հաղորդակցություն

2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը շարունակել է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը՝ ընդգրկելով հանրության լայն շրջանակների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և մասնագիտական համայնքների ներկայացուցիչների: Հանձնաժողովն իրականացրել է իր գործունեության համակարգված լուսաբանում, ապահովել է տեղեկատվության հասանելիությունն ու հրապարակայնությունը, ինչպես նաև հետևողականորեն խթանել է թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների ամրապնդմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն իր գործունեության լուսաբանման նպատակով պարբերաբար հրապարակել է տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր իր պաշտոնական կայքէջում, ինչպես նաև Ֆեյսբուքյան և Լինքդինյան սոցիալական հարթակներում: Ներկայացվող նյութերը վերաբերել են

Հանձնաժողովի գործունեության տարբեր ուղղություններին և իրականացված միջոցառումներին, ընդունված որոշումներին, ընթացիկ ծրագրերին ու ձեռքբերումներին:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կայքէջում, Ֆեյսբուքյան և Լինքդինյան էջերում հրապարակված նյութերի վերաբերյալ տվյալները.



Ըստ գծապատկերի 2025 թ.-ի երկրորդ կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կայքէջում հրապարակվել է 56 հոդված, 375 որոշում և եզրակացություն, Ֆեյսբուքյան էջում՝ 85, իսկ Լինքդինյան էջում 85 հրապարակում:

Հաշվետու ժամանակահատվածում, հանրային իրազեկման ծրագրերի շրջանակներում, Հանձնաժողովն իր սոցիալական կայքերում հրապարակել է նաև ինֆոգրաֆիկաներ՝ հանրային իրազեկվածության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով: Դրանցում ներառված են եղել թվային տվյալներ արձանագրված արդյունքների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք միջոցառումներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ, իրազեկման արշավներ, Հանձնաժողովում հյուրընկալվել են ներկայացուցիչներ միջազգային կազմակերպություններից, քաղաքացիական հասարակության կազմակերպություններից և գործընկեր կառույցներից: Հանձնաժողովի աշխատակիցները

մասնակցել են մի շարք դասընթացների, անցկացրել կրթական հանդիպումներ՝ նախատեսված միջին և ավագ դպրոցների աշակերտների համար, ունեցել միջազգային հանդիպումներ և ուսումնական այցեր:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի է ունեցել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Արդարադատության նախարարության համատեղ համաժողովը՝ «Հակակոռուպցիոն ոլորտում 2025 թվականին իրականացված աշխատանքները և առաջիկա անելիքները» խորագրով, որի ընթացքում ամփոփվել են Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ընթացքում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացված աշխատանքները և ձեռքբերումները: Աշխատաժողովի երկրորդ հատվածում կազմակերպվել է պանելային քննարկում «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների առկա մարտահրավերները և զարգացման հեռանկարները» խորագրով, որի ընթացքում ներկայացվել են Հանձնաժողովի հիմնական մարտահրավերները:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է նաև սերտ համագործակցությունը լրատվամիջոցների հետ, կազմակերպել է մի շարք հարցազրույցներ, քննարկումներ: Բացի այդ, օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացվել է շուրջ 60 լրատվամիջոցների մամուլի մշտադիտարկում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցների հրապարակումները ևս կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման իրավիճակների առերևույթ խախտման հատկանիշներ, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ նաև հայտարարագրերի ստուգման և վերլուծության համար:

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

9.1 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

Հանձնաժողովը 2025 թվականի երկրորդ կիսամյակի գործունեության ընթացքում Հայտարարագրման էլեկտրոնային համակարգում (այսուհետ՝ Համակարգ) շարունակել է կատարելագործման աշխատանքները:

Հաշվետու տարվա ընթացքում Համակարգում իրականացվել են տեխնիկական բարելավումներ, որոնց արդյունքում հայտարարատու պաշտոնատար անձինք կարողացել են հայտարարագրերը լրացնել առավել ավտոմատացված եղանակով:



Երկրորդ կիսամյակի ընթացքում գործարկվել է նոր հարթակ՝ Chatwoot, որը հնարավորություն է տալիս օգտատերերին հարցերի միջոցով ստանալ տեղեկատություն հայտարարագրերի լրացման կարգի, այդ թվում նաև տեխնիկական խնդիրների պարզաբանման և լուծման վերաբերյալ: Chatwoot-ը օգտատերերին օգնում է առավել արդյունավետ և արագ հաղորդակցություն ապահովել Հանձնաժողովի աշխատակիցների հետ: Նոր գործիքը հասանելի է հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի գլխավոր էջում:

9.2 Կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակ

Հաշվետու տարվա ընթացքում կատարված հիմնական աշխատանքները տարվել են սույն թվականի առաջին կիսամյակի ընթացքում գործարկված կուսակցությունների հաշվետվությունների տեխնիկական լավարկումների ուղղությամբ: Ապահովվել է կուսակցությունների հաշվետվություններում փոփոխություն կատարելու

գործընթացը, ինչպես կատարվում է հայտարարագրման էլեկտրոնային համակարգում։

Երկրորդ կիսամյակի ընթացքում փոփոխվել է կուսակցությունների տարեկան հաշվետվության նոր ձևաչափը, որը կտարածվի 2025 թվականի տարեկան հաշվետվությունների վրա։

Համակարգում թե՛ հայտարարագրերի և թե՛ կուսակցությունների հաշվետվությունների ուղղությամբ կատարված բարելավումները վերաբերել են նաև համակարգի ներքին աշխատանքին և աշխատակիցների կողմից տարվող աշխատանքներին։

Երկրորդ կիսամյակի ընթացքում՝ 2025 թվականի սեպտեմբերի 20-ին, Հանձնաժողովի թվայնացման օրակարգը, մասնավորապես գործող համակարգի սպասարկման, Համակարգի կատարելագործման, բարեվարքության հարցաթերթիկների թվայնացման, նվերների ռեեստրի կառուցման աշխատանքների շարունակության հետ կապված հարցերը ներկայացվել են Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստում և ստացել են Խորհրդի դրական եզրակացությունը։

10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի երկրորդ կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է ակտիվ համագործակցել միջազգային գործընկերների հետ, մասնավորապես.

- Հանձնաժողովում հյուրընկալվել են Ասիական զարգացման բանկի պատվիրակության ներկայացուցիչները, որի շրջանակներում ներկայացվել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրմանն առնչվող օրենսդրական փոփոխությունները և Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքները։
- Եվրոպական միության հետ մուտքի արտոնագրերի ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) շրջանակում ԵՄ գնահատման առաքելության պատվիրակության ներկայացուցիչները, որի ընթացքում քննարկվել է Հանձնաժողովի մանդատին առնչվող առանցքային հարցերը, ինչպես նաև անդրադարձել են կոռուպցիայի կանխարգելման ոլորտում արձանագրված առաջընթացին ու Հանձնաժողովի գործունեությանը վերաբերելի վիճակագրական տվյալներին։

Հաշվետվու ժամանակահատվածի ընթացքում Հանձնաժողովի անդամները հանդես են եկել որպես բանախոսներ կազմակերպված տարբեր միջոցառումներին, հատկապես՝

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հակակոռուպցիոն ցանցի 24-րդ լիագումար նիստին և Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի ղեկավար խմբի 30-րդ հանդիպմանը, որի ընթացքում հաստատվել է Հայաստանի առաջընթացի զեկույցը: Զեկույցը ներկայացնում է Ստամբուլյան գործողությունների ծրագրի՝ Հայաստանի գնահատման հինգերորդ փուլի շրջանակում գնահատում է վերջին տարիներին հակակոռուպցիոն հանձնառությունների իրականացման ընթացքը:
- Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ) նախաձեռնության գլոբալ գագաթնաժողովի ընթացքում կազմակերպված երկու պանելային քննարկումներին: Առաջին պանելային քննարկմանը՝ «Հանրային բարեվարքություն, թափանցիկություն և էթիկա» խորագրով, ներկայացվել է հանրային բարեվարքության ոլորտում Հայաստանում իրականացված և ներկայումս շարունակվող թվայնացման գործընթացն ու դրա ազդեցությունը հանրային վերահսկողության ամրապնդման և թափանցիկության խթանման վրա: Երկրորդ քննարկումը կազմակերպվել էր «Արդյունավետ հանրային բարեվարքության համակարգ. կանոնակարգեր, ինստիտուտներ և վարքային փոփոխություններ» խորագրով, որի ընթացքում ներկայացրել է Հանձնաժողովի՝ բարեվարքության ամրապնդմանն ուղղված միջոցառումները, ձեռքբերումները, բարեվարքության ուսումնասիրության ինստիտուտի ներդրումից ի վեր գրանցած արդյունքները, վարքագծի կանոնագրքի գործնականում կիրառումը, և դրանց արդյունքում պաշտոնատար անձանց վարքագծի փոփոխության միտումները:
- Դոհայում (Կատարի Պետություն) կազմակերպված ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների 11-րդ համաժողովին, որի ընթացքում «Դեպի քաղաքական ֆինանսավորման (կուսակցությունների ֆինանսավորման)

թափանցիկություն» խորագրով պանելային քննարկմանը ներկայացվել է կուսակցությունների ֆինանսավորման վերահսկողությանն առնչվող արդի հիմնախնդիրները, ինչպես նաև վերջին տարիներին Հանձնաժողովի կողմից այս ոլորտում իրականացված աշխատանքները, առկա մարտահրավերները։

Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովը մի շարք հրավերներ է ստացել մասնակցելու միջազգային գործընկերների կողմից կազմակերպված միջոցառումներին և հանդիպումներին, այդ թվում՝

- Վիտորիա-Գաստեյզ քաղաքում (Իսպանիայի Թագավորություն)՝ «Արևելյան գործընկերության և Արևմտյան Բալկանների համայնքային երկխոսություն» խորագրով պանելային քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացվել են քաղաքական ֆինանսավորման սպառնալիքները, կոռուպցիայի ազդեցությունը մարդկության վրա, տեղական մակարդակում մասնակցայնության կարևորությունը, քաղաքացիական հասարակության դերը թափանցիկության և հաշվետվողականության ապահովման հարցում։
- Վիտորիա-Գաստեյզ քաղաքում (Իսպանիայի Թագավորություն) կազմակերպված Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության (ԲԿԳ) Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համաժողովին։ Համաժողովի շրջանակներում կայացած «Փոխգործելիություն և տվյալների օգտագործում» թեմայով պանելային քննարկմանը ներկայացվել է Հանձնաժողովին՝ էլեկտրոնային հարթակի միջոցով հասանելի դարձված տվյալները, դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, իրավական և պրակտիկ մարտահրավերները։ Համաժողովի ընթացքում «Քաղաքականության մեջ գումարի թափանցիկության ապահովման ուղիները» թեմայով կայացած նիստին ներկայացվել է Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթը Հանձնաժողովին վերապահելու ժամանակից ի վեր թվային լուծումների միջոցով վերահսկողության արդյունավետության խթանման, ինչպես նաև թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման վերաբերյալ հարցերը։

Բացի այդ, Հանձնաժողովը մասնակցել է ամենամյա «Ժողովրդավարության հայկական ֆորումին», որի ընթացքում քննարկվել են Հայաստանում ժողովրդավարության առջև ծառացած մարտահրավերները, ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումների ընթացքը: Ֆորումի ընթացքում կազմակերպված «Կուսակցությունների ֆինանսավորումն ու հիբրիդային վտանգներ ընտրությունների նախաշեմին» խորագրով պանելային քննարկման ընթացքում ներկայացվել է կուսակցությունների ֆինանսական վերահսկողության գործիքակազմերը, կուսակցություններին տրվող նվիրատվությունների կառավարման և հաշվետվության մեխանիզմները: